ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԲԱՆ

ՄԱՍ 1. ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ԳԼՈՒԽ 1. ԵՐԵԽԱՅԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

℘1. ԵՐԵԽԱՅԻ ԾՆՆԴԻ ԳՐԱՆՑՈՒՄՆ ՈՒ ՍԵՐՄԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

1.1.1. Ի՞նչ կարգով է գրանցվում երեխայի ծնունդը

1.1. 2. Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ ներկայացնել երեխայի ծնունդը գրանցելիս

1.1. 3. Օրենքի տեսանկյունից ի՞նչ նշանակություն ունի երեխայի սերման հաստատումը

1.1. 4. Ինչպե՞ս է հաստատվում երեխայի սերումը հորից

1. 1. 5. Ի՞նչ կարգով է հաստատվում հայրությունը, եթե երեխայի հայրը հրաժարվում է հայրությունը ճանաչելուց

1.1.6. Կա՞ն, արդյոք, տարբերություններ ամուսնության մեջ գտնվող ծնողներից ծնված երեխաների և ամուսնության մեջ չգտնվող ծնողներից ծնված, սակայն հայրությունն օրենքով սահմանված կարգով հաստատված երեխաների՝ իրենց ծնողների ու նրանց ազգականների նկատմամբ ունեցած իրավունքների և պարտականությունների միջև

1.1.7. Կարո՞ղ է, արդյոք, վիճարկվել հայրության (մայրության) վերաբերյալ գրանցումը

℘2. ԵՐԵԽԱՅԻ ԱՆՎԱՆ ԵՎ ԱԶԳԱՆՎԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

1.2.1. Ինչպե՞ս է որոշվում ամուսնության մեջ գտնվող ծնողներից ծնված երեխայի ազգանունը

1.2.2. Ինչպե՞ս է որոշվում ամուսնության մեջ չգտնվող ծնողներից ծնված երեխայի անունն ու ազգանունը

1.2.3. Հնարավո՞ր է, արդյոք, փոխել երեխայի անունը կամ ազգանունը

1.2.4. Ծնողի ազգանվան փոփոխությունը հանգեցնու՞մ է, արդյոք, երեխայի ազգանվան փոփոխության

1.2.5. Որտե՞ղ պետք է դիմել երեխայի անունը կամ ազգանունը փոխելու կապակցությամբ

1.2.6. Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ ներկայացնել երեխայի անունը, ազգանունը կամ հայրանունը ծննդի գրանցման ակտում ուղղելու կապակցությամբ Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններին դիմելիս

1.2.7 Կա՞ն, արդյոք, ժամկետային սահմանափակումներ երեխայի անունը կամ ազգանունը ծննդի գրանցման ակտում ուղղելու կապակցությամբ դիմում ներկայացնելու համար

1.2.8. Ո՞վ կարող է դիմել երեխայի անունը կամ ազգանունը երեխայի ծննդի գրանցման ակտում ուղղելու կապակցությամբ

Թ3. ԵՐԵԽԱՅԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

1.3.1. Ինչպե՞ս է որոշվում Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող անձանցից ծնված երեխայի քաղաքացիությունը

1.3.2. Ինչպե՞ս է որոշվում Հայաստանի Հանրապետության քաղաքացու և օտարերկրացու ամուսնությունից ծնված երեխայի քաղաքացիությունը

1.3.3. Ինչպե՞ս է որոշվում քաղաքացիություն չունեցող անձանցից ծնված երեխայի քաղաքացիությունը

1.3.4. Ի՞նչ հետևանքներ է ունենում երեխայի քաղաքացիության համար ծնողների կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերումը

1.3.5. Ինչպե՞ս է ծնողների՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիության կորուստն անդրադառնում երեխայի քաղաքացիության վրա

1.3.6. Կա՞ն, արդյոք իրավիճակներ, երբ ծնողների՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիության կորուստը չի կարող հանգեցնել մինչև 14 տարեկան երեխայի քաղաքացիության կորստի

1.3.7. Ի՞նչ հետևանքներ ունի ծնողի քաղաքացիության փոփոխությունը 14-18 տարեկան երեխայի քաղաքացիության համար

1.3.8. Ո՞ր տարիքից անձը կարող է դիմել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և ՀՀ քաղաքացիությունից դուրս գալու խնդրանքով

1.3.9. Ո՞ր փաստաթղթերն են Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը հաստատող փաստաթղթերը

1.3.10. Կարո՞ղ են, արդյոք, ՀՀ քաղաքացիության անձնագիր ունենալ մինչև 16 տարեկան ՀՀ քաղաքացիները

1.3.11. Ո՞ր մարմիններն են անձնագիր տալիս

1.3.12. Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ ներկայացնել անձնագիր ստանալու համար

4. ԵՐԵԽԱՅԻ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԸ

1.4.1. Ինչպե՞ս է որոշվում երեխայի բնակության վայրը

1.4.2. Ինչպե՞ս է որոշվում երեխայի բնակության վայրը ծնողների՝ անջատ բնակվելու դեպքում

1.4.3. Ծնողների անջատ բնակվելու պարագայում երեխայի բնակության վայրի կապակցությամբ վեճի դեպքում ո՞ր դատարան պետք է դիմել և ի՞նչ փաստաթղթեր պետք է ներկայացնել

ԳԼՈՒԽ 2. ՈՐԴԵԳՐՎԱԾ ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

1. ՈՐԴԵԳՐՎԱԾ ԵՐԵԽԱՅԻ ԱՆՎԱՆ, ԱԶԳԱՆՎԱՆ ԵՎ ՀԱՅՐԱՆՎԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

2.1.1. Հնարավո՞ր է, արդյոք, փոխել որդեգրվող երեխայի անունը, ազգանունը և հայրանունը

2.1.2. Որդեգրումը վերացնելու դեպքում պահպանվու՞մ է, արդյոք, որդեգրման կապակցությամբ որդեգրված երեխային տրված անունը, ազգանունը և հայրանունը

2. ՈՐԴԵԳՐՎՈՂ ԵՐԵԽԱՅԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

2.2.1. Ի՞նչ ազդեցություն է ունենում երեխայի քաղաքացիության վրա նրա որդեգրումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից

2.2.2. Ի՞նչ ազդեցություն է ունենում ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխայի քաղաքացիության վրա նրա որդեգրումն օտարերկրյա քաղաքացիների կողմից

2.2.3. Ի՞նչ հետևանքներ է ունենում որդեգրողի քաղաքացիության փոփոխությունը որդեգրված երեխայի քաղաքացիության վրա

3. ՈՐԴԵԳՐՎԱԾ ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐԴԵԳՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԻՐ ՀԱՐԱԶԱՏ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

2.3.1. Ի՞նչ իրավահարաբերություններ են ծագում որդեգրվող երեխայի և որդեգրողի միջև

2.3.2. Պահպանվու՞մ են, արդյոք, որդեգրված երեխայի անձնական և գույքային իրավունքները նրա հարազատ ծնողների նկատմամբ

2.3.3. Երեխայի որդեգրումից հետո պահպանվու՞մ է, արդյոք, հարազատ ծնողների մահվան կապակցությամբ նշանակված կենսաթոշակի կամ

նպաստի իրավունքը

2.3.4. Որդեգրումը վերացնելն ի՞նչ հետևանքներ է ունենում որդեգրված երեխայի և նրա հարազատ ծնողների ու ազգականների միջև իրավահարաբերությունների վրա

2.3.5. Ո՞ր դեպքերում և ի՞նչ կարգով կարող է որդեգրումը վերացվել

2.3.6. Թույլատրվու՞մ է, արդյոք, որդեգրումը վերացնել որդեգրվածի չափահաս դառնալուց հետո

2.3.7. Ի՞նչ տարբերություններ կան որդեգրումը վերացնելու և որդեգրումն անվավեր ճանաչելու միջև

℘4. ՈՐԴԵԳՐՎԱԾ ԵՐԵԽԱՅԻ ԺԱՌԱՆԳՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

2.4.1 Ի՞նչ իրավունքներ ունեն որդեգրված երեխաները որդեգրողների և նրանց ազգականների ժառանգության նկատմամբ

2.4.2. Ի՞նչ իրավունքներ ունեն որդեգրված երեխաներն իրենց հարազատ ծնողների և նրանց ազգականների ժառանգության նկատմամբ

ԳԼՈՒԽ 3. ԵՐԵԽԱՅԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

℘1. ԵՐԵԽԱՅԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

3.1.1. Երաշխավորվա՞ծ է, արդյոք, երեխաների՝ անվճար բժշկական օգնություն ստանալու իրավունքը

3.1.2. Ո՞ր դեպքերում է երեխաներին տրամադրվում անվճար բժշկական օգնություն

℘2. ԵՐԵԽԱՅԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

3.2.1. Ինչպիսի՞ սոցիալական օգնություն է տրամադրվում երեխային՝ կերակրողին կորցնելու դեպքում

3.2.2. Ի՞նչ նպաստներ են տրամադրվում երեխաներին

ԳԼՈՒԽ 4. ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՑԻԱ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

℘1. ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ՝ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԿՆՔԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

4.1.1. Կարո՞ղ են, արդյոք, երեխաները լինել քաղաքացիա-

իրավական գործարքների մասնակիցներ

4.1.2. Ո՞ր գործարքներն են փոքրահասակ երեխաները (6-14 տարեկան) կնքում ինքնուրույնաբար՝ առանց օրինական ներկայացուցիչների մասնակցության

4.1.3. Ո՞վ է պատասխանատվություն կրում փոքրահասակ երեխաների (6-14 տարեկան) կնքած գործարքներով

4.1.4. Կարո՞ղ է, արդյոք, փոքրահասակ երեխան պատասխանատվություն կրել իր պատճառած վնասի համար

4.1.5. Փոքրահասակ երեխայի պատճառած վնասի համար պատասխանատվություն կրու՞մ են, արդյոք, երեխայից անջատ ապրող ծնողները

4.1.6. Կարո՞ղ են, արդյոք, 14-18 տարեկան անչափահասներն ինքնուրույնաբար կնքել գործարքներ

4.1.7. Կարո՞ղ է, արդյոք, օրինական համարվել առանց օրինական ներկայացուցչի համաձայնության՝ 14-18 տարեկան անչափահասի կնքած այն գործարքը, որի համար օրենքով պահանջվում է օրինական ներկայացուցչի համաձայնությունը

4.1.8. Կարո՞ղ են, արդյոք, 14-18 տարեկան անչափահասները պատասխանատվություն կրել իրենց կնքած գործարքներով և իրենց պատճառած նյութական վնասի համար

4.1.9. Շարունակու՞մ են, արդյոք, օրինական ներկայացուցիչները գույքային պատասխանատվություն կրել 14-18 տարեկան անչափահասի պատճառած վնասի համար, երբ վերջինս հասնում է չափահասության տարիքի

2. ԾՆՈՂՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԵՐԵԽԱՅԻ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ

4.2.1. Ո՞վքեր են երեխայի օրինական ներկայացուցիչները

4.2.2. Ո՞ր դեպքերում է հնարավոր երեխաների շահերը ներկայացնելիս՝ օրինական ներկայացուցիչների իրավունքների սահմանափակում

3. ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

4.3.1. Ի՞նչ գույք կարող են անչափահասներն ունենալ որպես սեփականություն

4.3.2. Ո՞վ է իրականացնում անչափահասի գույքային իրավունքները

4.3.3. Արդյո՞ք երեխաները և ծնողները սեփականության իրավունք են ձեռք բերում միմյանց գույքի նկատմամբ

ԳԼՈՒԽ 5. ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

5.1. Ո՞ր տարիքից անչափահասը կարող է աշխատանքի ընդունվել

5.2. Ի՞նչ սահմանափակումներ են գործում անչափահասին աշխատանքի ընդունելիս

5.3. Ի՞նչ արտոնություններ ունեն անչափահասներն աշխատանքային ռեժիմում

5.4. Ի՞նչ կարգով է անչափահաս բանվորին և ծառայողին արձակուրդ տրամադրվում

5.5. Ի՞նչ լրացուցիչ արձակուրդներ են տրվում աշխատանքն ուսման հետ համատեղող անչափահասներին

ԳԼՈՒԽ 6. ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

§1. ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ

6.1.1. Ո՞ր տարիքից է անձը ենթակա քրեական պատասխանատվության

6.1.2. Ի՞նչ առանձնահատկություններ ունի անչափահասների քրեական պատասխանատվությունը համաձայն ՀՀ քրեական օրենսդրության

6.1.3. Ի՞նչ առանձնահատկություններ ունի անչափահաս դատապարտյալի նկատմամբ ազատազրկման կիրառումը

6.1.4. Կարո՞ղ է, արդյոք, անչափահասի նկատմամբ մահապատիժ կիրառվել

6.1.5. Ո՞ր դեպքերում են անչափահասի քրեական պատասխանատվությունը և նրա նկատմամբ պատժի կիրառումը փոխարինվում դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներով

6.1.6. Որո՞նք են անչափահասների նկատմամբ կիրառվող դաստիարակչական բնույթի հարկադրական միջոցները

6.1.7. Անչափահասին ազատազրկման ձևով պատիժ նշանակելիս ինչպե՞ս է որոշվում ուղղիչ հիմնարկի տեսակը

6.1.8. Որո՞նք են անչափահաս դատապարտյալների նկատմամբ պատժից պայմանական վաղակետ ազատում կիրառելու առանձնահատկությունները

℘2. ԱՆՉԱՓԱՀԱՄՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐ

6.2.1. Ի՞նչ առանձնահատկություններ ունի անչափահասների գործերով վարույթը

6.2.2. Պարտադի՞ր է, արդյոք, պաշտպանի մասնակցությունն անչափահասների գործերով վարույթին

6.2.3. Իրավունք ունի՞, արդյոք, անչափահաս կասկածյալը կամ մեղադրյալը հրաժարվել պաշտպանից

6.2.4. Ի՞նչ կարգով է իրականացվում անչափահաս վկայի հարցաքննությունը

6.2.5. Կարո՞ղ է, արդյոք, անչափահասի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել կալանքը

6.2.6. Գոյություն ունե՞ն, արդյոք, անչափահասների նկատմամբ կիրառվող խափանման հատուկ միջոցներ

6.2.7. Անչափահասի նկատմամբ դատավճիռ կայացնելիս դատարանը ի՞նչ սկզբունքներով պետք է առաջնորդվի

ՄԱՍ 2. ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ԳԼՈՒԽ 1. ՀԱՎԱՍԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ - ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

℘1. ԿԱՆԱՆՑ ԵՎ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

1.1.1. Ի՞նչ ենք հասկանում կանանց և տղամարդկանց իրավահավասարություն ասելով

1.1.2. Ի՞նչ բովանդակություն ունի «կանանց նկատմամբ խտրականություն» հասկացությունը

1.1.3. Ապահովվա՞ծ է, արդյոք, կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

℘2. ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

1.2.1. Կանանց նկատմամբ խտրականության կանխմանն ուղղված ի՞նչ միջազգային իրավական փաստաթղթեր կան

1.2.2. Ի՞նչ իրավունքներ են սահմանված Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայով

1.2.3. Վերահսկողության ի՞նչ մեխանիզմի միջոցով է ապահովվում Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարումը

1.2.4. Կարո՞ղ են, արդյոք, կանայք իրենց իրավունքների պաշտպանությունն իրականացնել միջազգային կառույցների միջոցով

3. ԿՆՈՋ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆ՝ ԸՍՏ ԱՄՈՒՍՆԱՑԱԾ ԿՆՈՋ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ

1.3.1. Ի՞նչ ազդեցություն է ունենում կնոջ քաղաքացիության վրա ամուսնու քաղաքացիության փոփոխությունը

1.3.2. Ի՞նչ ազդեցություն է ունենում Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող կնոջ քաղաքացիության վրա նրա ամուսնությունը օտարերկրացու հետ

1.3.3. Ի՞նչ կարգով է ՀՀ քաղաքացիություն տրվում ՀՀ քաղաքացու հետ ամուսնացած կնոջը

ԳԼՈՒԽ 2. ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՐԳԵԼՈՒՄԸ

2.1.1. Ի՞նչ աշխատանքներում է արգելվում կանանց աշխատանքի օգտագործումը

2.1.2. Թույլատրվու՞մ է, արդյոք, կանանց ներգրավումը գիշերային աշխատանքում

2.1.3. Ի՞նչ սահմանափակումներ են նախատեսված փոքրահասակ երեխաներ ունեցող կանանց արտաժամյա աշխատանքի և հանգստյան օրերին նրանց աշխատանքի համար

2. ՀՂԻ ԿԱՆԱՆՑ ԵՎ ՓՈՔՐԱՀԱՍԱԿ ԵՐԵԽԱՆԵՐ ԽՆԱՄՈՂ ԿԱՆԱՆՑ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

2.2.1. Ի՞նչ երաշխիքներ են սահմանված հղի կանանց և փոքրահասակ երեխաներ ունեցող կանանց աշխատանքի ընդունելիս և աշխատանքից արձակելիս

2.2.2. Կարո՞ղ են, արդյոք, հղի կանայք և փոքրահասակ երեխա խնամող կանայք պահանջել ավելի թեթև աշխատանքի փոխադրում

2.2.3. Կարո՞ղ է, արդյոք, հղի կինը կամ փոքրահասակ երեխա ունեցող կինն օգտվել ոչ լրիվ աշխատաժամանակի իրավունքից

2.2.4. Որքա՞ն է հղիության և ծննդաբերության արձակուրդի տևողությունը

2.2.5. Պարտավո՞ր է, արդյոք, ադմինիստրացիան փոքրահասակ երեխա խնամող կնոջը տրամադրել լրացուցիչ արձակուրդ

2.2.6. Նորածին երեխա որդեգրած կանանց տրամադրվու՞մ է, արդյոք, երեխայի խնամքի համար արձակուրդ

ԳԼՈՒԽ 3. ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

§1. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ

3.1.1. Ո՞րն է կանանց և տղամարդկանց տարիքային աշխատանքային կենսաթոշակային տարիքը

3.1.2. Ու՞մ կարող է տրամադրվել արտոնյալ պայմաններով տարիքային աշխատանքային կենսաթոշակ

3.1.3. Օրենսդրությունը նախատեսու՞մ է, արդյոք, տարիքային աշխատանքային կենսաթոշակի նշանակման հատուկ կանոններ բազմազավակ մայրերի և հաշմանդամ երեխաներ ունեցող մայրերի համար

3.1.4. Ո՞ր դեպքերում է նշանակվում երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակ

3.1.5. Ի՞նչ կարգով են հաշվարկվում կենսաթոշակները

3.1.6. Կենսաթոշակ նշանակելիս կնոջ ընդհանուր աշխատանքային ստաժում հաշվառվու՞մ է, արդյոք, հաշմանդամ կամ փոքրահասակ երեխայի խնամքի ժամանակահատվածը

§2. ԵՐԵԽԱՅԻ ԽՆԱՄՔԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԿԱՆԱՆՑ ՏՐՎՈՂ ՆՊԱՍՏՆԵՐ

3.2.1. Ի՞նչ նպաստներ են տրվում կանանց երեխայի ծննդյան և երեխայի խնամքի կապակցությամբ

3.2.2. Արդյո՞ք միայն աշխատող կանայք ունեն երեխայի խնամքի համար նպաստ ստանալու իրավունք

ԳԼՈՒԽ 4. ԿԻՆԸ ԵՎ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ

§1. ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

4.1.1. Ի՞նչ է կնոջ նկատմամբ բռնությունը

4.1.2. Ի՞նչ է նշանակում ընտանեկան բռնություն

4.1.3. Որտե՞ղ կարող են պաշտպանություն գտնել ընտանիքում բռնության ենթարկված կանայք

4.1.4. Ի՞նչ անել սեփական անվտանգությունն ապահովելու համար

4.1.5. Պետական մակարդակով ի՞նչ միջոցներ են ձեռնարկվում կանանց նկատմամբ բռնությունը կանխելու նպատակով

§2. ԿԱՆԱՅՔ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ

4.2.1. Կնոջն ազատազրկման ձևով պատիժ նշանակելիս ինչպե՞ս է որոշվում ուղղիչ հիմնարկի տեսակը

4.2.2. Ինչպե՞ս է կազմակերպվում ազատազրկման վայրերում գտնվող կնոջ երեխայի խնամքը

4.2.3. Պատժի համակարգի ի՞նչ առանձնահատկություններ է օրենսդրությունը նախատեսում կանանց համար

ՀԱՎԵԼՎԱԾ 1 Կանանց և տղամարդկանց տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակելու համար ըստ տարիների սահմանված տարիքային սանդղակ

ՀԱՎԵԼՎԱԾ 2 Կանանց և տղամարդկանց ծերության կենսաթոշակ նշանակելու համար ըստ տարիների սահմանված տարիքային սանդղակ

ՀԱՎԵԼՎԱԾ 3 Կանանց և տղամարդկանց արտոնյալ պայմաններով տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակելու համար ըստ տարիների սահմանված տարիքային սանդղակ

ՀԱՎԵԼՎԱԾ 4 Քաղվածք

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄ հայրությունը ճանաչելու վերաբերյալ

ՆԱԽԱԲԱՆ

Ընտանեկան հանրամատչելի իրավաբանական գրադարանի այս հերթական թողարկումը նվիրված է կանանց և երեխաների իրավունքներին:

Երեխաները, պայմանավորված իրենց ֆիզիկական, մտավոր և հոգեբանական առանձնահատկություններով, կարիք ունեն հատուկ պաշտպանության և հոգածության: Երեխաների նկատմամբ պետության հատուկ հոգածությունը դրսևորվում է այնպիսի միջոցառումների կազմակերպման և իրավական նորմերի ամրագրման մեջ, որոնք կոչված են ապահովելու երեխայի աճի ու բարեկեցության բնական միջավայր:

Սույն թողարկման նպատակն է օգնել ընթերցողին՝ գտնելու երեխայի իրավունքներին առնչվող առավել հաճախ հանդիպող իրավական հարցերի պատասխանները: Երեխայի ծննդյան կապակցությամբ ծնողներին հետաքրքրում են այնպիսի հարցեր, ինչպիսիք են երեխայի ծննդի գրանցման, հայրության հաստատման, երեխայի խնամքի կապակցությամբ տրամադրվող սոցիալական օգնության հետ կապված հարցերը: Բազմաթիվ հարցեր են ծագում քաղաքացիաիրավական, աշխատանքային և քրեաիրավական հարաբերություններին անչափահասների մասնակցության կապակցությամբ:

Պետության հատուկ պաշտպանության և հոգածության ներքո է գտնվում նաև մայրությունը, ինչը դրսևորվում է կանանց համար աշխատանքային իրավահարաբերությունների և սոցիալական ապահովության ոլորտում առանձին արտոնությունների սահմանման մեջ:

Այս թողարկման մեջ տրված են վերոհիշյալ իրավահարաբերությունների ոլորտներում՝ քաղաքացիներին առավել հուզող և տարածված հարցերի պատասխանները, որոնց նրանք առնչվում են առօրյա կյանքում:

Առանձին գլուխ է նվիրված կանանց նկատմամբ բռնությանը, որում ներկայացված են կնոջ նկատմամբ բռնության դրսևորման ձևերը, բռնության ենթարկված կնոջ պաշտպանության միջոցները:

Պատասխանները հիմնվում են ոչ միայն ներպետական օրենսդրության դրույթների, այլ նաև Հայաստանի Հանրապետության վավերացրած և հանրապետության ներպետական իրավունքի մասը կազմող միջազգային պայմանագրերի վրա: Պատասխաններում հղումներ են կատարվել համապատասխան նորմատիվ ակտերին, ինչը հնարավորություն կտա ընթերցողին առանց դժվարության գտնելու իրեն անհրաժեշտ նորմատիվ ակտերը:

ՄԱՍ 1. ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ԳԼՈՒԽ 1. ԵՐԵԽԱՅԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

§1. ԵՐԵԽԱՅԻ ԾՆՆԴԻ ԳՐԱՆՑՈՒՄՆ ՈՒ ՍԵՐՄԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

1.1.1. Ի՞նչ կարգով է գրանցվում երեխայի ծնունդը

Ծննդի գրանցումը կատարվում է երեխայի ծննդավայրի կամ ծնողների կամ նրանցից մեկի բնակավայրի Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում (ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգիրք, 188-րդ հոդված: Այսուհետև՝ ՀՀ ԱԸՕ): Ծննդյան վերաբերյալ հայտարարությունն տրվում է բանավոր կամ գրավոր ձևով՝ ծնողների կամ նրանցից մեկի կողմից: Հայտարարությունը կարող է արվել նաև ազգականների, հարևանների, բժշկական հիմնարկի ադմինիստրացիայի կողմից, որտեղ գտնվելիս է եղել մայրը երեխան ծննդաբերելիս, եթե ծնողները հիվանդ են, մահացել են կամ այլ պատճառներով ի վիճակի չեն երեխայի ծննդյան մասին հայտարարություն անել:

Ծննդյան վերաբերյալ հայտարարությունը պետք է արվի երեխայի ծննդյան օրվանից ոչ ուշ, քան երեք ամսվա ընթացքում, իսկ մահացած երեխա ծնվելու դեպքում՝ ծնվելու պահից երեք օրվա ընթացքում:

1.1.2. Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ ներկայացնել երեխայի ծնունդը գրանցելիս

Ծնունդը գրանցելիս պահանջվում է համապատասխան քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմին ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

-երեխայի ծննդյան փաստը և ժամանակը հաստատող՝ բժշկական հիմնարկի տեղեկանքը,

-ծնողների ինքնությունը հաստատող փաստաթղթեր,

-ծնողների ամուսնության վկայականը, եթե ծնողների ինքնությունը հաստատող փաստաթղթերում ամուսնության մասին նշում չկա,

- ամուսնության մեջ չգտնվող ծնողների երեխայի ծննդյան դեպքում ներկայացվում է ծննդյան ակտում երեխայի հոր մասին տեղեկություններ գրանցելու համար հիմք հանդիսացող փաստաթուղթ:

1.1.3. Օրենքի տեսանկյունից ի՞նչ նշանակություն ունի երեխայի սերման հաստատումը

Երեխայի սերման հաստատումն ունի մեծ կարևորություն, քանզի երեխայի սերման՝ օրենքով սահմանված կարգով հաստատումը հիմք է հանդիսանում ծնողների և երեխաների միջև փոխադարձ իրավունքների և պարտականությունների առաջացման համար (ՀՀ ԱԸՕ, 51-րդ հոդված):

Օրինակ, եթե տվյալ անձի՝ երեխայի հայրը լինելու փաստը օրենքով սահմանված կարգով չի հաստատվում, ապա այդ անձից չի կարող ալիմենտ գանձվել, երեխան չի կարող լինել նրա ըստ օրենքի ժառանգը:

1.1.4. Ինչպե՞ս է հաստատվում երեխայի սերումը հորից

Եթե երեխայի ծնողները գտնվում են ամուսնության մեջ, ապա երեխայի հայր է ճանաչվում մոր ամուսինը: Մոր ամուսնուց երեխայի սերումը հաստատվում է ծնողների ամուսնության վերաբերյալ քաղաքացիական կացության ակտերի համապատասխան մարմնում կատարված գրառմամբ՝ ամուսնության վկայականով (ՀՀ ԱԸՕ, 52-րդ հոդված):

Այն դեպքում, երբ երեխայի ծնողները չեն գտնվում ամուսնության մեջ, երեխայի սերումը հորից հաստատվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնին երեխայի հոր և մոր կողմից տրվող համատեղ դիմումի միջոցով: Երեխայի մոր մահվան, անգործունակ ճանաչվելու, ծնողական իրավունքներից զրկվելու կամ նրա բնակավայրը պարզելն անհնարին լինելու դեպքում հայրությունը հաստատվում է միայն հոր դիմումի հիման վրա:

1.1.5. Ի՞նչ կարգով է հաստատվում հայրությունը, եթե երեխայի հայրը հրաժարվում է հայրությունը ճանաչելուց

Ամուսնության մեջ չգտնվող ծնողներից երեխա ծնվելու դեպքում, եթե չկա հոր և մոր համատեղ դիմումը, հայրությունը կարող է որոշվել դատական կարգով (ՀՀ ԱԸՕ, 54-րդ հոդված): Դատական կարգով հայրությունը ճանաչելու պահանջով դատարան կարող են դիմել երեխայի ծնողներից մեկը, խնամակալը (հոգաբարձուն), ինչպես նաև երեխան ինքը՝ չափահաս դառնալուց հետո: Հայրությունը որոշելիս՝ դատարանը նկատի է առնում երեխայի ծնվելուց առաջ երեխայի մոր և պատասխանողի համատեղ բնակվելը և ընդհանուր տնտեսություն վարելը, կամ նրանց կողմից երեխայի համատեղ դաստիարակությունը կամ խնամքը, կամ այն ապացույցները, որոնք որոշակիորեն հաստատում են պատասխանողի կողմից հայրության ընդունումը:

Ծանոթություն: Խնամակալն այն անձն է, ով խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից նշանակվում է մինչև 14 տարեկան ծնողազուրկ կամ ծնողական խնամքից զրկված երեխայի խնամքն իրականացնելու նպատակով: Նույն նպատակով 14-18 տարեկան ծնողազուրկ կամ ծնողական խնամքից զրկված երեխայի նկատմամբ սահմանվում է հոգաբարձություն: Խնամակալ կամ հոգաբարձու նշանակում է երեխայի բնակության վայրի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը: Խնամակալը և հոգաբարձուն իրենց խնամքի տակ գտնվող երեխայի օրինական ներկայացուցիչներն են և բոլոր մարմիններում նրանց իրավունքներն ու շահերը ներկայացնում են առանց հատուկ լիազորության: Խնամակալը և հոգաբարձուն պարտավոր են դաստիարակել իրենց խնամքի տակ գտնվող երեխային, հոգ տանել նրա առողջության, ֆիզիկական և հոգևոր զարգացման համար: Խնամակալությունը դադարում է երեխայի 14 տարեկան դառնալով, իսկ հոգաբարձությունը՝ երեխայի 18 տարեկան դառնալով:

1.1.6. Կա՞ն, արդյոք, տարբերություններ ամուսնության մեջ գտնվող ծնողներից ծնված երեխաների և ամուսնության մեջ չգտնվող ծնողներից ծնված, սակայն հայրությունն օրենքով սահմանված կարգով հաստատված երեխաների՝ իրենց ծնողների ու նրանց ազգականների նկատմամբ ունեցած իրավունքների և պարտականությունների միջև

Այն դեպքում, երբ ամուսնության մեջ չգտնվող ծնողներից ծնված երեխայի նկատմամբ հայրությունը հաստատվում է՝ կամ ծնողների համատեղ դիմումի հիման վրա, կամ դատական կարգով, ապա երեխան ծնողների և նրանց ազգականների նկատմամբ ձեռք է բերում նույն իրավունքներն ու պարտականությունները, ինչ իրավունքներ և պարտականություններ ունեն ամուսնության մեջ գտնվող ծնողներից ծնված երեխաները: Օրինակ, երեխան, ում նկատմամբ հայրությունն օրենքով սահմանված կարգով հաստատվել է, հոր և նրա ազգականների գույքը ժառանգում է նույն պայմաններով, ինչ ամուսնության մեջ գտնվող ծնողներից ծնված երեխան, կամ օրենքով սահմանված կարգով երեխայի հայր ճանաչված ծնողը երեխայի նկատմամբ ունի նույն ալիմենտային պարտավորությունները, ինչ ամուսնության մեջ գտնվող հայրը:

1.1.7. Կարո՞ղ է, արդյոք, վիճարկվել հայրության (մայրության) վերաբերյալ գրանցումը

Օրենքը նախատեսում է ինչպես հայրության, այնպես էլ մայրության գրանցումը վիճարկելու հնարավորություն: Հայրության (մայրության) գրանցումը կարող է վիճարկվել միայն դատական կարգով՝ այն անձի կողմից, ով գրանցված է համապատասխանաբար որպես հայր կամ մայր, ինչպես նաև այն անձի կողմից, ով փաստացի հայրն է կամ մայրը: Հայրության կամ մայրության գրանցումը կարող է վիճարկվել նաև երեխայի կողմից՝ չափահաս դառնալուն պես: ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 55-րդ հոդվածը հայրության կամ մայրության գրանցումը դատական կարգով վիճարկելու համար սահմանել է ժամկետային սահմանափակում: Համաձայն այդ դրույթի, հայրության կամ մայրության գրանցումը վիճարկելու իրավունք ունեցող անձինք իրավունք ունեն այդ գրանցումը վիճարկելու պահանջով դատարան դիմել մեկ տարվա ընթացքում՝ այն ժամանակից սկսած, երբ նրան հայտնի է դարձել կամ պետք է հայտնի դառնար կատարված գրանցման մասին:

§2. ԵՐԵԽԱՅԻ ԱՆՎԱՆ ԵՎ ԱԶԳԱՆՎԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

1.2.1. Ինչպե՞ս է որոշվում ամուսնության մեջ գտնվող ծնողներից ծնված երեխայի ազգանունը

Ամուսնության մեջ գտնվող ծնողներից ծնված երեխայի ազգանունը որոշվում է ծնողների ազգանունով: Եթե ծնողներն ունեն տարբեր ազգանուններ, երեխային տրվում է հոր կամ մոր ազգանունը՝ ծնողների համաձայնությամբ: Ծնողների միջև երեխայի անվան կամ ազգանվան կապակցությամբ անհամաձայնության դեպքում ծագած տարաձայնությունները լուծվում են խնամակալության և հոգաբարձության

մարմնի ցուցումով (ՀՀ ԱԸՕ, 59-րդ հոդված):

Ծանոթություն: Խնամակալության և հոգաբարձության մարմիններ են հանդիսանում տեղական ինքնակառավարման մարմինները, այն է՝ համայնքապետարանները: Այս մարմիններն են նշանակում խնամակալներ և հոգաբարձուներ, պարտականությունները չկատարող խնամակալներին և հոգաբարձուներին ազատում իրենց պարտականությունների կատարումից, խնամակալներին կամ հոգաբարձուներին, օրենքով սահմանված դեպքերում, թույլտվություն են տալիս իրենց խնամարկյալների անունից կնքել գործարքներ:

1.2.2. Ինչպե՞ս է որոշվում ամուսնության մեջ չգտնվող ծնողներից ծնված երեխայի անունն ու ազգանունը

Այն դեպքում, երբ երեխան ծնվում է ամուսնության մեջ չգտնվող ծնողներից, և երեխայի նկատմամբ հայրությունն օրենքով սահմանված կարգով հաստատված չէ, երեխային անուն է տրվում մոր ցուցումով: Երեխային տրվում է մոր ազգանունը: Եթե հետագայում մայրը փոխում է իր ազգանունը, մասնավորապես, ամուսնանալու արդյունքում, խնամակալության և հոգաբարձության մարմինը, երեխայի շահերից ելնելով, մոր դիմումի հիման վրա կարող է թույլատրել փոխել անչափահասի ազգանունը: Եթե երեխան ազգանվան փոփոխման ժամանակ փոքր չէ տասը տարեկանից, երեխայի համաձայնությունն ազգանվան փոփոխման պարտադիր պայման է:

1.2.3. Հնարավո՞ր է, արդյոք, փոխել երեխայի անունը կամ ազգանունը

Հնարավոր է երեխայի և՛ անվան, և՛ ազգանվան փոփոխությունը: Ծնողների համատեղ դիմումի հիման վրա մինչև երեխայի չափահաս դառնալը, խնամակալության և հոգաբարձության մարմինը, երեխայի շահերից ելնելով, կարող է թույլատրել երեխայի անվան կամ ծնողներից մեկի ազգանվամբ երեխայի ազգանվան փոփոխումը:

Երեխայի ազգանվան փոփոխությունը կարող է կատարվել նաև ծնողներից մեկի դիմումի հիման վրա, եթե ամուսնալուծությունից հետո ծնողը, որի մոտ ապրում է երեխան, ցանկանում է երեխային տալ իր ազգանունը:

Տասը տարին լրացած երեխայի անվան կամ ազգանվան փոփոխության դեպքում նրա համաձայնությունը պարտադիր է:

Օրինակ.

Հարց: Առաջին ամուսնությունից ծնված երեխաս կրում է հոր ազգանունը: Երկրորդ ամուսնությունից հետո ես կրում եմ ամուսնուս ազգանունը: Կարո՞ղ եմ, արդյոք, երեխայիս տալ երկրորդ ամուսնուս ազգանունը:

Պատասխան: Խնմակալության և հոգաբարձության մարմինը, երեխայի շահերից ելնելով, կարող է թույլատրել փոփոխել երեխայի ազգանունը և նրան տալ մոր նոր ազգանունը:

1.2.4. Ծնողի ազգանվան փոփոխությունը հանգեցնու՞մ է, արդյոք, երեխայի ազգանվան փոփոխությանը

Այն դեպքում, երբ փոխվում է ծնողներից մեկի ազգանունը, երեխայի ազգանունն այդ հիմքով կարող է փոխվել ծնողների համաձայնությամբ: Համաձայնության բացակայության դեպքում երեխայի ազգանվան փոփոխության հարցը լուծում է խնամակալության և հոգաբարձության մարմինը:

1.2.5. Որտե՞ղ պետք է դիմել երեխայի անունը կամ ազգանունը փոխելու կապակցությամբ

Երեխայի անունը կամ ազգանունը փոխելիս փոփոխություններ են կատարվում երեխայի ծննդի գրանցման ակտում: Երեխայի անունը, ազգանունը կամ հայրանունը փոխելու վերաբերյալ դիմումները տրվում են կամ դիմողի բնակության վայրի Քաղաքացիական կացության ակտերի գրանցման (այսուհետև՝ ՔԿԱԳ) տարածքային բաժին, կամ այն ՔԿԱԳ տարածքային բաժին, որտեղ գրանցված է երեխայի ծնունդը:
ՔԿԱԳ տարածքային բաժինն իրավունք չունի մերժելու դիմումը քննության առնելը:

1.2.6. Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ ներկայացնել երեխայի անունը, ազգանունը կամ հայրանունը ծննդի գրանցման ակտում ուղղելու կապակցությամբ Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններին դիմելիս

Երեխայի անունը, ազգանունը կամ հայրանունը երեխայի ծննդի գրանցման ակտում ուղղելու վերաբերյալ դիմումին կից պետք է ներկայացվի դիմումատուի անձը հաստատող փաստաթղթի պատճենը: Դիմողի անձը հաստատող փաստաթղթեր են համարվում անձնագիրը (անձնագիրը փոխարինող փաստաթղթերը), զինվորական գրքույկը:
Դիմումին կցվում է նաև երեխայի ծննդյան վկայականը:

1.2.7. Կա՞ն, արդյոք, ժամկետային սահմանափակումներ երեխայի անունը կամ ազգանունը ծննդի գրանցման ակտում ուղղելու կապակցությամբ դիմում ներկայացնելու համար

Երեխայի անունը կամ ազգանունը կարող է փոխվել տարբեր պատճառներով: Պայմանավորված այդ պատճառներով՝ երեխայի անունը կամ ազգանունը ծննդի գրանցման մեջ ուղղելու կապակցությամբ դիմելու համար օրենսդրությամբ սահմանված են տարբեր ժամկետներ:
Մասնավորապես, եթե երեխայի անունը կամ ազգանունը ծննդի գրանցման ակտում ուղղելու պատճառն այն է, որ ծնունդը գրանցելիս երեխային անուն կամ ազգանուն է տրվել առանց հաշվի առնելու ծնողների ցանկությունը, ապա երեխայի անունը կամ ազգանունը ծննդի գրանցման մեջ ուղղելու վերաբերյալ դիմումները ՔԿԱԳ տարածքային բաժիններն ընդունում են երեխայի ծնունդը գրանցելու օրից սկսած մեկ տարուց ոչ ուշ: Եթե երեխայի անունը ծննդի գրանցման մեջ ուղղելու համար հիմքն այն է, որ երեխան փաստացի կրում է իր ծննդի գրանցման մեջ նշված անունից տարբերվող անուն, ապա երեխայի անունն ուղղելու վերաբերյալ դիմումները ՔԿԱԳ տարածքային բաժիններն ընդունում են յոթ տարուց ոչ ուշ:

1.2.8. Ո՞վ կարող է դիմել երեխայի անունը կամ ազգանունը երեխայի ծննդի գրանցման ակտում ուղղելու կապակցությամբ

Երեխայի անունը կամ ազգանունը ծննդի գրանցման ակտում ուղղելու կապակցությամբ ՔԿԱԳ համապատասխան տարածքային բաժին կարող են դիմել երեխայի ծնողները, որդեգրողները, խնամակալները կամ հոգաբարձուները, ինչպես նաև այն անձինք ու կազմակերպությունները, ում դաստիարակությանն են հանձնված երեխաները:

Օրենսդրությունը երեխայի անունը կամ ազգանունը ծննդի գրանցման ակտում ուղղելու կապակցությամբ դիմելու հնարավորություն է տալիս նաև 16 տարին լրացած անչափահասներին, եթե նրանք օրենքով սահմանված կարգով ճանաչվել են գործունակ:

§3. ԵՐԵԽԱՅԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

1.3.1. Ինչպե՞ս է որոշվում Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող անձանցից ծնված երեխայի քաղաքացիությունը

Ծննդով քաղաքացիության ձեռքբերման հիմքում ընկած են երկու սկզբունք՝ հողի իրավունքի և արյան իրավունքի սկզբունքները: Հողի իրավունքի սկզբունքի համաձայն երեխայի քաղաքացիությունը որոշվում է նրա ծննդյան վայրով՝ անկախ նրանից, թե ծնողներն ինչ քաղաքացիություն ունեն: Արյան իրավունքի սկզբունքի համաձայն երեխայի քաղաքացիությունը որոշվում է ծնողների քաղաքացիությամբ՝ անկախ նրանից, թե երեխան որ երկրում է ծնվել:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով սահմանված է ծննդով քաղաքացիության ձեռքբերման արյան սկզբունքը: Համաձայն այս սկզբունքի՝ երեխան, ում ծնողները նրա ծնվելու պահին Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են, անկախ ծնվելու վայրից, ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն («Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդված):

1.3.2. Ինչպե՞ս է որոշվում Հայաստանի Հանրապետության քաղաքացու և օտարերկրացու ամուսնությունից ծնված երեխայի քաղաքացիությունը

Եթե երեխայի ծնվելու պահին երեխայի ծնողներից մեկը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, իսկ մյուսը՝ օտարերկրացի, ապա երեխայի քաղաքացիությունը որոշվում է ծնողների գրավոր համաձայնությամբ: Օրենքը կարգավորում է նաև նշված համաձայնության բացակայությամբ ծագող իրավիճակները: Նման դեպքերում երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, եթե ծնվել է Հայաստանի Հանրապետությունում, կամ եթե Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք չբերելու դեպքում դառնում է քաղաքացիություն չունեցող անձ, կամ եթե ծնողները մշտապես բնակվում են Հայաստանի Հանրապետությունում:

1.3.3. Ինչպե՞ս է որոշվում քաղաքացիություն չունեցող անձանցից

ծնված երեխայի քաղաքացիությունը

Եթե երեխայի ծնվելու պահին երեխայի ծնողներից մեկը քաղաքացիություն չունեցող անձ է, իսկ մյուսը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի, ապա երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն: Օրենքի այս դրույթը, Ապաքաղաքացիության կրճատման մասին 1961թ. օգոստոսի 30-ի կոնվենցիայի դրույթների պահանջներին համապատասխան, նպատակ ունի կանխելու երեխայի՝ քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի ձեռքբերումը: Նույն նպատակն է հետապնդում նաև «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածը, որի համաձայն Հայաստանի Հանրապետությունում ծնված երեխան, ում ծնողները քաղաքացիություն չունեցող անձինք են, ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:

1.3.4. Ի՞նչ հետևանքներ է ունենում երեխայի քաղաքացիության համար ծնողների կողմից՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերումը

Մինչև 14 տարեկան երեխան, որի ծնողները ձեռք են բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, նույնպես ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն («Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենք, 16-րդ հոդված): Եթե ՀՀ քաղաքացիություն է ձեռք բերում ծնողներից միայն մեկը, ապա մինչև 14 տարեկան երեխան ՀՀ քաղաքացիություն է ձեռք բերում, եթե այդ կապակցությամբ առկա է ծնողների համաձայնությունը, կամ եթե երեխան բնակվում է Հայաստանի Հանրապետության տարածքում և առկա է ՀՀ քաղաքացիություն ձեռք բերած ծնողի համաձայնությունը:

1.3.5. Ինչպե՞ս է ծնողների՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիության կորուստն անդրադառնում երեխայի քաղաքացիության վրա

Այնպես, ինչպես ծնողների՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերումը հանգեցնում է նրանց մինչև 14 տարեկան երեխայի՝ ՀՀ քաղաքացիության ձեռքբերման, այնպես էլ ծնողների՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիության կորուստն ինքնըստինքյան հանգեցնում է նրանց մինչև 14 տարեկան երեխայի ՀՀ քաղաքացիության կորստի: Եթե Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնում է ծնողներից մեկը, իսկ մյուսը ՀՀ քաղաքացի է, ապա նրանց մինչև 14 տարեկան երեխան կորցնում է ՀՀ քաղաքացիությունը, եթե առկա է ծնողների համաձայնությունը, կամ եթե երեխան բնակվում է Հայաստանի Հանրապետությունում և առկա է ՀՀ քաղաքացի հանդիսացող ծնողի համաձայնությունը:

1.3.6. Կա՞ն, արդյոք, իրավիճակներ, երբ ծնողների՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիության կորուստը չի կարող հանգեցնել մինչև 14 տարեկան երեխայի քաղաքացիության կորստի

Համաձայն Ապաքաղաքացիության կրճատման մասին 1961թ.

կոնվենցիայի (Հայաստանի Հանրապետությունը սույն կոնվենցիային միացել է 16.03.1994թ.) 6-րդ հոդվածի, կոնվենցիայի մասնակից պետությունները, որոնց օրենսդրությունը ծնողների քաղաքացիության կորստով պայմանավորում է նաև երեխայի քաղաքացիության կորուստը, պետք է երեխայի քաղաքացիության կորուստը ճանաչեն միայն այն դեպքում, եթե երեխան ունի կամ ձեռք է բերում այլ պետության քաղաքացիություն:

Հետևաբար, ՀՀ քաղաքացիությունը կորցրած ծնողների մինչև 14 տարեկան երեխան կորցնում է ՀՀ քաղաքացիությունը, եթե նա ունի կամ ձեռք է բերում այլ պետության քաղաքացիություն:

1.3.7. Ի՞նչ հետևանքներ ունի ծնողի քաղաքացիության փոփոխությունը 14-18 տարեկան երեխայի քաղաքացիության համար

14-18 տարեկան երեխայի ծնողների կողմից ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու դեպքում երեխան ՀՀ քաղաքացիություն է ձեռք բերում միայն իր համաձայնությամբ: Նմանապես, 14-18 տարեկան երեխայի ծնողների կողմից ՀՀ քաղաքացիությունը կորցնելու դեպքում երեխան իր քաղաքացիությունը կարող է կորցնել միայն իր համաձայնությամբ:

1.3.8. Ո՞ր տարիքից անձը կարող է դիմել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և ՀՀ քաղաքացիությունից դուրս գալու խնդրանքով

ՀՀ քաղաքացիություն ստանալու խնդրանքով կարող է դիմել 18 տարին լրացած յուրաքանչյուր անձ:

Հայաստանի Հանրապետության տարածքում՝ ՀՀ քաղաքացիություն ստանալու համար դիմումը ներկայացվում է ներքին գործերի մարմիններին, իսկ օտարերկրյա պետություններում՝ դիմումը ներկայացվում է դիվանագիտական ներկայացուցչություններ կամ հյուպատոսական մարմիններ:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից դուրս գալու և այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք ունի Հայաստանի Հանրապետության 18 տարին լրացած յուրաքանչյուր քաղաքացի: Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից դուրս գալու մասին քաղաքացու դիմումը մերժվում է, եթե՝

- նրա նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում,
- նրա նկատմամբ կա դատարանի օրինական ուժի մեջ մտած և կատարման ենթակա դատավճիռ,
- նա ունի պետության, ձեռնարկության, կազմակերպությունների կամ քաղաքացիների շահերի հետ կապված չկատարած պարտավորություններ,
- Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից նրա դուրս գալը հակասում է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության շահերին:

1.3.9. Ո՞ր փաստաթղթերն են Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը հաստատող փաստաթղթերը

Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը հաստատող փաստաթղթեր են ՀՀ քաղաքացիության անձնագիրը, իսկ մինչև 16 տարին

լրանալը՝ ծննդյան վկայականը կամ ՀՀ քաղաքացիությունը հաստատող վկայականը: ՀՀ քաղաքացու անձնագիր պարտավոր են ունենալ 16 տարին լրացած բոլոր ՀՀ քաղաքացիները՝ անկախ բնակության վայրից:

1.3.10. Կարո՞ղ են, արդյոք, ՀՀ քաղաքացիության անձնագիր ունենալ մինչև 16 տարեկան ՀՀ քաղաքացիները

Համաձայն ՀՀ անձնագրային համակարգի կանոնադրության՝ մինչև 16 տարեկան քաղաքացիները կարող են ունենալ ՀՀ քաղաքացու անձնագիր՝ ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների դիմումի հիման վրա:
Հաշվի առնելով անձի ֆիզիկական զարգացման առանձնահատկությունները՝ ՀՀ՝ մինչև 16 տարեկան քաղաքացիների անձնագրերը ենթակա են փոխանակման՝ 1, 3, 7, 12 և 16 տարեկան հասակում:

1.3.11. Ո՞ր մարմիններն են անձնագիր տալիս

Հայաստանի Հանրապետության տարածքում՝ ՀՀ քաղաքացիների անձնագրերը տալիս են ըստ անձնագիրն ստացող անձի մշտական, ժամանակավոր կամ փաստացի բնակության վայրի՝ ներքին գործերի մարմինները: Օտարերկրյա պետություններում անձնագիրը տալիս են Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունները:

1.3.12. Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ ներկայացնել անձնագիր ստանալու համար

Անձնագիր ստանալու համար ՀՀ քաղաքացիները ներկայացնում են.
- սահմանված ձևի դիմում,
- ծննդյան վկայական կամ մինչև 16 տարին լրանալն ստացած ՀՀ քաղաքացու անձնագիր,
- ծնողների կամ օրինական ներկայացուցիչների՝ նոտարական կարգով հաստատված համաձայնությունը (մինչև 16 տարին լրանալն անձնագիր ստանալու դեպքում):

§4. ԵՐԵԽԱՅԻ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԸ

1.4.1. Ինչպե՞ս է որոշվում երեխայի բնակության վայրը

Օրենքը սահմանում է, որ 14 տարին չլրացած երեխայի բնակության վայր է համարվում նրա օրինական ներկայացուցիչների՝ ծնողների, որդեգրողների, խնամակալների բնակության վայրը:
Օրենքը չի պարունակում 14 տարին լրացած երեխայի բնակության վայրը սահմանող որևէ նորմ: Սրանից հետևում է, որ 14 տարին լրանալուց հետո երեխան կարող է բնակվել իր օրինական ներկայացուցիչներից անջատ: Սակայն, ամեն դեպքում, 14 տարին լրանալուց հետո էլ երեխայի բնակության վայրի ընտրությունը կատարվում է օրինական ներկայացուցիչների վերահսկողությամբ:

Օրինակ.

Հարց: Ես և ամուսինս գնել ենք նոր բնակարան, որտեղ ոչ ոք գրանցված չէ: Մենք գրանցված ենք մեկ այլ բնակարանում: Կարո՞ղ ենք արդյոք մեր 13-ամյա որդուն գրանցել նոր բնկարանում:

Պատասխան: 13-ամյա երեխան չի կարող գրանցվել նոր բնակարանում, քանի որ նրա ծնողները գրանցված չեն այդ բնակարանում:

1.4.2. Ինչպե՞ս է որոշվում երեխայի բնակության վայրը ծնողների՝ անջատ բնակվելու դեպքում

Եթե ծնողներն ամուսնալուծության կամ այլ պատճառներով բնակվում են անջատ, ապա երեխայի բնակության վայրը որոշվում է նրանց համաձայնությամբ (ՀՀ ԱԸՕ, 64-րդ հոդված):

Եթե միմյանցից անջատ ապրող ծնողները երեխայի բնակության վայրի կապակցությամբ համաձայնության չեն գալիս, ապա հարցը լուծվում է դատական կարգով:

1.4.3. Ծնողների անջատ բնակվելու պարագայում երեխայի բնակության վայրի կապակցությամբ վեճի դեպքում ո՞ր դատարան պետք է դիմել և ի՞նչ փաստաթղթեր պետք է ներկայացնել

Ընդհանուր կանոնի համաձայն՝ ծնողների անջատ բնակվելու պարագայում երեխայի բնակության վայրի կապակցությամբ վեճի դեպքում հայց է հարուցվում պատասխանողի բնակության վայրի դատարան: Պատասխանող կարող են լինել ինչպես ծնողը, այնպես էլ ծնողներից մեկի ազգականները:

Հայցադիմումին կից պահանջվում է ներկայացնել.

- երեխայի ծննդյան վկայականի պատճենը,
- ծնողների ամուսնալուծության վկայականի պատճենը (եթե ամուսնալուծված են),
- տեղեկանք ծնողների աշխատավայրից՝ նրանց եկամուտների վերաբերյալ,
- տեղեկանք ծնողների բնակարանային պայմանների վերաբերյալ:

Գործի քննությանը մասնակից են դարձվում նաև խնամակալության և հոգաբարձության մարմինները:

ԳԼՈՒԽ 2. ՈՐԴԵԳՐՎԱԾ ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

1. ՈՐԴԵԳՐՎԱԾ ԵՐԵԽԱՅԻ ԱՆՎԱՆ, ԱԶԳԱՆՎԱՆ ԵՎ ՀԱՅՐԱՆՎԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

2.1.1. Հնարավո՞ր է, արդյոք, փոխել որդեգրվող երեխայի անունը, ազգանունը և հայրանունը

Ելնելով որդեգրման գաղտնիության ապահովման նկատառումներից՝ օրենսդրությունը նախատեսում է որդեգրողի խնդրանքով որդեգրվող երեխայի ինչպես ազգանվան և հայրանվան, այնպես էլ անվան փոփոխման հնարավորություն: Որդեգրման մասին որոշում կայացնելիս՝ որդեգրողի խնդրանքով որդեգրվող երեխային տրվում է որդեգրողի ազգանունը և հայրանուն՝ որդեգրողի անունով: Եթե որդեգրողը կին է, հայրանունը տրվում է նրա ցուցումով: Եթե որդեգրողը կին է, և որդեգրումից հետո երեխան պահպանում է իրավահարաբերություններն իր հոր հետ, ապա որդեգրող կինը չի կարող իր ցանկությամբ երեխային հայրանուն տալ:

Որդեգրողի խնդրանքով կարող է փոխվել նաև որդեգրվող երեխայի անունը: Որդեգրման գաղտնիությունն ապահովելու նպատակով, որդեգրողի խնդրանքով, որդեգրման որոշմամբ կարող է փոխվել նաև երեխայի ծննդյան վայրը և ծննդյան ամսաթիվը:

Ամեն դեպքում, տասը տարին լրացած որդեգրվող երեխային որդեգրողի ազգանունը կամ հայրանունը կարող է տրվել, ինչպես նաև անունը կարող է փոխվել միայն երեխայի համաձայնությամբ:

2.1.2. Որդեգրումը վերացնելու դեպքում պահպանվու՞մ է, արդյոք, որդեգրման կապակցությամբ որդեգրված երեխային տրված անունը, ազգանունը և հայրանունը

Որդեգրման վերացման դեպքում դատարանը, ելնելով երեխայի շահերից, իրավասու է լուծելու այն հարցը, թե պահպանվու՞մ են, արդյոք, որդեգրման կապակցությամբ երեխային տրված անունը, ազգանունը և հայրանունը (ՀՀ ԱԸՕ, 134-րդ հոդված): Այս դեպքում ևս հաշվի է առնվում երեխայի համաձայնությունը, եթե լրացել է նրա տասը տարին:

2. ՈՐԴԵԳՐՎՈՂ ԵՐԵԽԱՅԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

2.2.1. Ի՞նչ ազդեցություն է ունենում երեխայի քաղաքացիության վրա նրա որդեգրումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից

Համաձայն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների որդեգրած երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն: Որդեգրվող երեխան ՀՀ քաղաքացիություն է ձեռք բերում նաև այն դեպքում, երբ որդեգրող ամուսիններից միայն մեկն է ՀՀ քաղաքացի, իսկ

մյուսը քաղաքացիություն չունեցող անձ է:
Եթե երեխա որդեգրած ամուսիններից մեկը ՀՀ քաղաքացի է, իսկ մյուսն օտարերկրացի, ապա որդեգրվող երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն, եթե՝
- առկա է որդեգրող ամուսինների համաձայնությունը,
- երեխան բնակվում է Հայաստանի Հանրապետությունում և առկա է ՀՀ քաղաքացի հանդիսացող՝ որդեգրող ամուսնու համաձայնությունը,
- որդեգրվող երեխան ՀՀ քաղաքացիություն ձեռք չբերելու դեպքում դառնում է քաղաքացիություն չունեցող անձ:

2.2.2. Ի՞նչ ազդեցություն է ունենում ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխայի քաղաքացիության վրա նրա որդեգրումն օտարերկրյա քաղաքացիների կողմից

Ընդհանուր կանոնի համաձայն՝ օտարերկրացիների որդեգրած՝ ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխան պահպանում է ՀՀ քաղաքացիությունը: Օտարերկրացիների կողմից որդեգրվող՝ ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխայի քաղաքացիությունը կարող է փոխվել միայն որդեգրողների դիմումի հիման վրա:
Որպեսզի քաղաքացիություն չունեցող անձանց որդեգրած երեխան ևս չդառնա քաղաքացիություն չունեցող անձ, օրենքը սահմանում է, որ քաղաքացիություն չունեցող անձանց որդեգրած՝ ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխան պահպանում է ՀՀ քաղաքացիությունը: ՀՀ քաղաքացի հանդիսացող՝ որդեգրվող երեխան ՀՀ քաղաքացիությունը պահպանում է նաև այն դեպքում, երբ որդեգրող ամուսիններից մեկը քաղաքացիություն չունեցող անձ է, իսկ մյուսը՝ ՀՀ քաղաքացի:

2.2.3. Ի՞նչ հետևանքներ է ունենում որդեգրողի քաղաքացիության փոփոխությունը որդեգրված երեխայի քաղաքացիության վրա

Որդեգրողների կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերումը հանգեցնում է մինչև 14 տարեկան որդեգրված երեխայի՝ ՀՀ քաղաքացիության ձեռքբերման: Նմանապես, որդեգրողների՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիության կորուստն ինքնըստինքյան հանգեցնում է մինչև 14 տարեկան որդեգրված երեխայի ՀՀ քաղաքացիության կորստի:
Ապաքաղաքացիության կրճատման մասին 1961թ. կոնվենցիայի 5-րդ հոդվածը երաշխիքներ է ստեղծում որդեգրողների՝ տվյալ պետության քաղաքացիության կորստի հետևանքով որդեգրված երեխայի՝ քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակ ձեռք բերելուց խուսափելու համար: Համաձայն այդ հոդվածի, որդեգրողների քաղաքացիության կորստին հետևում է նաև որդեգրված երեխայի քաղաքացիության կորուստը միայն այն դեպքում, եթե երեխան ունի կամ ձեռք է բերում այլ պետության քաղաքացիություն:
Հետևաբար, ՀՀ քաղաքացիությունը կորցրած որդեգրողների մինչև 14 տարեկան որդեգրված երեխան կորցնում է ՀՀ քաղաքացիությունը, եթե նա ունի կամ ձեռք է բերում այլ պետության քաղաքացիություն:

§3. ՈՐԴԵԳՐՎԱԾ ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐԴԵԳՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԻՐ ՀԱՐԱԶԱՏ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

2.3.1. Ի՞նչ իրավահարաբերություններ են ծագում որդեգրվող երեխայի և որդեգրողի միջև

Որդեգրվածները և նրանց սերունդը որդեգրողների ու նրանց ազգականների նկատմամբ բոլոր իրավունքներով և պարտականություններով հավասարվում են ծագումով ազգականներին (ՀՀ ԱԸՕ, 124-րդ հոդված):

2.3.2. Պահպանվու՞մ են, արդյոք, որդեգրված երեխայի անձնական և գույքային իրավունքները նրա հարազատ ծնողների նկատմամբ

Որդեգրված երեխաները, որդեգրողների նկատմամբ ձեռք բերելով նրանց զավակներին հավասար իրավունքներ, միաժամանակ, կորցնում են իրենց անձնական և գույքային իրավունքներն իրենց հարազատ ծնողների ու նրանց ազգականների նկատմամբ (ՀՀ ԱԸՕ, 124-րդ հոդվածի 2-րդ մաս): Սակայն, երբ որդեգրումը կատարվում է մեկ անձի կողմից, և որդեգրողը տղամարդ է, մոր ցանկությամբ կարող են մոր և նրա ազգականների նկատմամբ պահպանվել իրավունքներ և պարտականություններ: Նմանապես, եթե որդեգրողը կին է, որդեգրված երեխան կարող է հոր ցանկությամբ պահպանել իրավունքներ և պարտականություններ հոր ու նրա ազգականների նկատմամբ: Ծնողներից մեկի հետ իրավահարաբերություններ պահպանելու մասին պետք է մատնանշվի որդեգրման վերաբերյալ որոշման մեջ:

Եթե ծնողներից մեկը մահացել է, ապա մահացածի ծնողների խնդրանքով որդեգրված երեխան իրավունքներ և պարտականություններ կարող է պահպանել մահացած ծնողի ազգականների նկատմամբ, եթե որդեգրողը չի առարկում դրա դեմ: Մահացած ծնողի ազգականների հետ իրավահարաբերություններ պահպանելու մասին ևս պետք է մատնանշվի որդեգրման վերաբերյալ որոշման մեջ:

2.3.3. Երեխայի որդեգրումից հետո պահպանվու՞մ է, արդյոք, հարազատ ծնողների մահվան կապակցությամբ նշանակված կենսաթոշակի կամ նպաստի իրավունքը

Եթե երեխան որդեգրման պահին ծնողներին կորցնելու կապակցությամբ ստանում է կենսաթոշակ, ապա այն ստանալու իրավունքը պահպանում է նաև որդեգրման ժամանակ (ՀՀ ԱԸՕ, 126-րդ հոդված):

2.3.4. Որդեգրումը վերացնելը ի՞նչ հետևանքներ է ունենում որդեգրված երեխայի և նրա հարազատ ծնողների ու ազգականների միջև իրավահարաբերությունների համար

Որդեգրումը վերացնելու դեպքում վերականգնվում են երեխայի և նրա ծնողների ու ազգականների միջև փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները: Միաժամանակ, դադարում են փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները որդեգրվածի ու որդեգրողի միջև: Որդեգրումը վերացնելու դեպքում դատարանի վճռով երեխան հանձնվում է ծնողներին, իսկ եթե դա հակասում է երեխայի շահերին, երեխան հանձնվում է խնամակալության և հոգաբարձության մարմիններին:

2.3.5. Ո՞ր դեպքերում և ի՞նչ կարգով կարող է որդեգրումը վերացվել

Որդեգրումը վերացվում է դատական կարգով, եթե որդեգրումը կատարվել է առանց երեխայի ծնողների կամ որդեգրողի ամուսնու համաձայնության: Որդեգրումը վերացնելու հայցով դատարան կարող է դիմել ծնողը կամ որդեգրողի ամուսինը:
Տասը տարին լրացած անչափահասի որդեգրումը վերացնելու հարցը լուծելիս դատարանը հաշվի է առնում նրա համաձայնությունը:

2.3.6 Թույլատրվու՞մ է, արդյոք, որդեգրումը վերացնել որդեգրվածի չափահաս դառնալուց հետո

Որդեգրումը վերացնել չի թույլատրվում, եթե որդեգումը վերացնելու վերաբերյալ պահանջ ներկայացնելու պահին որդեգրվածը չափահաս է դարձել: Սակայն այս դրույթը չի խոչընդոտում որդեգրվածի չափահաս դառնալուց հետո որդեգրումը վերացնելուն, եթե առկա է որդեգրողի, որդեգրվածի ծնողների և որդեգրվողի համաձայնությունը:

2.3.7. Ի՞նչ տարբերություններ կան որդեգրումը վերացնելու և որդեգրումն անվավեր ճանաչելու միջև

Առաջին հերթին, որդեգրումը վերացնելու և անվավեր ճանաչելու միջև եղած տարբերությունները վերաբերում են դրանց հիմքերին: Ի տարբերություն որդեգրումը վերացնելու հիմքերի (որդեգրումը վերացնելու հիմքերը տես 2.3.5. կետում), որդեգրումը կարող է անվավեր ճանաչվել այն դեպքերում, երբ՝
- որդեգրման վերաբերյալ որոշումը հիմնված է եղել կեղծ փաստաթղթերի վրա,
-որդեգրումը եղել է կեղծ,
- որդեգրողը եղել է օրենքով սահմանված կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձ,
-որդեգրողը եղել է ծնողական իրավունքներից զրկված անձ:
Որդեգրումը վերացնելը որդեգրումն անվավեր ճանաչելուց տարբերվում է նաև որդեգրումը դադարելու պահով: Որդեգրումը վերացնելու դեպքում որդեգրումը դադարում է այն պահից, երբ օրինական ուժի մեջ է մտնում որդեգրումը վերացնելու վերաբերյալ դատարանի վճիռը: Որդեգրումն անվավեր ճանաչելու դեպքում որդեգրումն անվավեր է համարվում որդեգրման վերաբերյալ որոշումը կայացնելու պահից:

Ծանոթություն: Դատական կարգով անգործունակ կարող է ճանաչվել այն անձը, ով հոգեկան խանգարման հետևանքով չի կարող հասկանալ իր

գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք:
Դատական կարգով սահմանափակ գործունակ կարող է ճանաչվել այն անձը, ով ոգելից խմիչքների կամ թմրամիջոցների չարաշահման հետևանքով իր ընտանիքը դնում է նյութական ծանր կացության մեջ:

4. ՈՐԴԵԳՐՎԱԾ ԵՐԵԽԱՅԻ ԺԱՌԱՆԳՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

2.4.1. Ի՞նչ իրավունքներ ունեն որդեգրված երեխաները որդեգրողների և նրանց ազգականների ժառանգության նկատմամբ

Որդեգրողի մահից հետո որդեգրվածները նրա ժառանգության նկատմամբ ունեն բոլոր այն իրավունքները, որոնք ժառանգատուի գույքի նկատմամբ ունեն կամ կարող էին ունենալ նրա հարազատ զավակները: Ըստ օրենքի՝ ժառանգության դեպքում, որդեգրված երեխան, ժառանգատուի հարազատ երեխաներին հավասար իրավունքներով, հրավիրվում է որպես առաջին հերթի ժառանգ:

2.4.2. Ի՞նչ իրավունքներ ունեն որդեգրված երեխաներն իրենց հարազատ ծնողների և նրանց ազգականների ժառանգության նկատմամբ

Որդեգրված երեխաները, կորցնելով իրենց անձնական և գույքային իրավունքներն իրենց հարազատ ծնողների ու նրանց ազգականների նկատմամբ, ի թիվս այլ անձնական և գույքային իրավունքների, կորցնում են նաև իրենց հարազատ ծնողների մահից հետո նրանց գույքը ժառանգելու իրավունքը:
Այն դեպքում, երբ, որդեգրվելով մեկ անձի կողմից, երեխան պահպանում է իր իրավունքներն ու պարտականությունները ծնողներից մեկի նկատմամբ, որդեգրված երեխան պահպանում է նաև այդ ծնողի գույքը ժառանգելու իրավունքը:

ԳԼՈՒԽ 3. ԵՐԵԽԱՅԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

1. ԵՐԵԽԱՅԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

3.1.1. Երաշխավորվա՞ծ է, արդյոք, երեխաների՝ անվճար բժշկական օգնություն ստանալու իրավունքը

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր երեխա, առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում, ունի անվճար բժշկական օգնություն ստանալու իրավունք: Նշված օրենքին համապատասխան՝ յուրաքանչյուր տարի ընդունվում է առողջապահական

պետական նպատակային ծրագիր, որի բաղկացուցիչ մասն է երեխաների առողջության պահպանման ծրագիրը: Այս ամենամյա նպատակային ծրագրերն ընդգրկում են բնակչությանը, այդ թվում՝ նաև երեխաներին, մատուցվող՝ պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնությունն ու ծառայությունները:

3.1.2. Ո՞ր դեպքերում է երեխաներին տրամադրվում անվճար բժշկական օգնություն

2001թ. առողջապահական նպատակային ծրագրի հիման վրա ընդունված՝ 2001թ. պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին կառավարության 30.03. 2001թ. որոշմամբ սահմանված են այն սոցիալական առանձին խմբերը, որոնց տրամադրվում է պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում: Այս որոշման համաձայն՝ անվճար բժշկական օգնություն և սպասարկում տրամադրվում է.

- միայնակ մայրերի երեխաներին (մինչև 18 տարեկան),
- ծնողազուրկ երեխաներին (միակողմանի, երկկողմանի, մինչև 18 տարեկան),
- հաշմանդամ երեխաներին (մինչև 16 տարեկան),
- բազմազավակ ընտանիքի երեխաներին (բազմազավակ են համարվում մինչև 18 տարեկան չորս և ավելի անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքները),
- մինչև 7 տարեկան երեխաներին՝ ամբուլատոր-պոլիկլինիկական բուժհաստատություններում,
- մինչև 3 տարեկան մանուկներին՝ հիվանդանոցային հաստատություններում:

2. ԵՐԵԽԱՅԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

3.2.1. Ինչպիսի՞ սոցիալական օգնություն է տրամադրվում երեխային՝ կերակրողին կորցնելու դեպքում

«ՀՀ քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի համաձայն, կերակրողին կորցրած 18 տարին չլրացած երեխան կերակրողին կորցնելու դեպքում իրավունք ունի ստանալու աշխատանքային կենսաթոշակ կամ սոցիալական կենսաթոշակ: Ընդ որում, այդ կենսաթոշակի իրավունքը պահպանվում է անկախ կերակրողին կորցրած երեխայի՝ տվյալ անձի խնամքի տակ գտնվելու փաստից:

Օրենքը սահմանում է կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակ տրամադրելու հետևյալ կարգը.

- միակողմանի ծնողազուրկ երեխային՝ բազային կենսաթոշակի չափով՝ ավելացնելով մահացած ծնողի աշխատանքային ստաժի համար սահմանվող հավելումների 50%-ը,

- երկկողմանի ծնողազուրկ երեխային՝ բազային կենսաթոշակի 120%-ի չափով՝ ավելացնելով մահացած ծնողների աշխատանքային ստաժների համար հաշվարկվող հավելումների 10%-ը:

Միակողմանի ծնողազուրկ երեխային կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական կենսաթոշակ տրվում է բազային կենսաթոշակի չափով, երկկողմանի ծնողազուրկ երեխային՝ բազային կենսաթոշակի 120%-ի չափով:

3.2.2. Ի՞նչ նպաստներ են տրամադրվում երեխաներին

Հայաստանի Հանրապետությունում ընտանեկան նպաստի համակարգ ներդնելու մասին ՀՀ կառավարության՝ 1998թ. նոյեմբերի 19-ի թիվ 727 որոշմամբ, հանրապետությունում վերացվեցին երեխաների առանձին խմբերի տրվող նպաստները: Այդ որոշման համաձայն՝ հանրապետությունում գործող տարաբնույթ նպաստների և փոխհատուցումների համակարգից նպաստի միասնական համակարգի անցնելու քաղաքականություն իրականացնելու նպատակով 1999թ. հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունում ներդրվեց ընտանեկան նպաստի համակարգը:

Համաձայն ընտանիքների անապահովության աստիճանի գնահատման կարգի, ընտանիքում երեխաների՝ օրենսդրությամբ նախատեսված առանձին խմբերի առկայությունը հաշվի է առնվում տվյալ ընտանիքի անապահովության աստիճանը գնահատելիս: Երեխաների այդ խմբերն են.

- մինչև 16 տարեկան հաշմանդամ երեխան,
- մինչև 2 տարեկան երեխան,
- 2 տարեկանից մինչև 18 տարեկան երեխան,
- միակողմանի ծնողազուրկ երեխան,
- երկկողմանի ծնողազուրկ երեխան,
- ամուսնալուծված ընտանիքի երեխան,
- միայնակ մոր երեխան:

Ընտանիքների անապահովության աստիճանի գնահատման կարգը երեխաների նշված խմբերից յուրաքանչյուրի համար սահմանում է սոցիալական խմբի անապահովության հատուկ միավոր, որը հիմք է ընտանիքի անապահովության միավորը հաշվելիս:

Եթե միևնույն երեխան պատկանում է նշված մի քանի խմբերի, ապա նրա անապահովության ամբողջական միավորը հաշվարկվում է յուրաքանչյուր սոցիալական խմբին համապատասխանող անապահովության միավորների գումարման միջոցով՝ օգտագործելով ճշգրտման գործակիցներ:

ԳԼՈՒԽ 4. ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՑԻԱ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

§1. ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ՝ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԿՆՔԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

4.1.1. Կարո՞ղ են, արդյոք, երեխաները լինել քաղաքացիաիրավական գործարքների մասնակիցներ

Ոմանք սխալմամբ ենթադրում են, որ երեխաները չեն կարող իրենց անունից մասնակցել քաղաքացիաիրավական գործարքների և որպես սեփականություն՝ գույք ունենալ: Սակայն նման պատկերացումը ճիշտ չէ:

Քաղաքացիաիրավական գործարքների մասնակցելու համար անհրաժեշտ է օժտված լինել իրավունակությամբ և գործունակությամբ: Իրավունակությունը, այն է՝ քաղաքացիական իրավունքներ ունենալու և պարտականություններ կրելու ունակությունը, ծագում է անձի ծննդյան պահից և դադարում նրա մահվամբ: Հետևաբար, երեխաները կարող են ունենալ քաղաքացիական իրավունքներ և կրել պարտականություններ: Սակայն այդ իրավունքներն ինքնուրույն իրականացնելու և պարտականությունները կրելու համար անհրաժեշտ է օժտված լինել նաև գործունակությամբ, այն է՝ սեփական գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, ինչպես նաև պարտականությունները կատարելու ունակությամբ: Գործունակությունն իր ողջ ծավալով ծագում է 18 տարեկանում:

Մինչև 6 տարեկան երեխաների անունից բոլոր գործարքները կնքում են նրանց օրինական ներկայացուցիչները, այն է՝ ծնողները, որդեգրողները կամ խնամակալները: Փոքրահասակ երեխաները (6-14 տարեկան), ինքնուրույնաբար կարող են կնքել միայն օրենքով նախատեսված սահմանափակ թվով գործարքներ: Ի տարբերություն փոքրահասակ երեխաների՝ 14-18 տարեկան անչափահասների գործունակության ծավալն ավելի մեծ է և համապատասխանաբար ավելի լայն է այն գործարքների շրջանակը, որոնք 14-18 տարեկան անչափահասները կարող են կնքել ինքնուրույնաբար:

Օրինակ.

Հարց: Երեխաս 3 երեք տարեկան է: Տատիկը ցանկություն ունի իր տունը նվիրել նրան: Իմ կարծիքով մինչև երեխայիս չափահաս դառնալը տունը նրան նվիրելը հնարավոր չէ:

Պատասխան: Երեխայի տարիքը խոչընդոտ չէ նրան գույք նվիրելու համար: Տատիկը կարող է իր տունը նվիրել թոռնիկին նաև մինչև նրա չափահաս դառնալը: Սակայն, այս դեպքում, տան նվիրատվության պայմանագիրը նվիրատուի (տվյալ դեպքում տատիկի) հետ երեխայի անունից պետք է կնքի մայրը կամ հայրը:

4.1.2. Ո՞ր գործարքներն են փոքրահասակ երեխաները (6-14 տարեկան)

կնքում ինքնուրույնաբար՝ առանց օրինական ներկայացուցիչների մասնակցության

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 29-րդ հոդվածը սահմանում է այն գործարքների շրջանակը, որոնք փոքրահասկ երեխաները կարող են կնքել ինքնուրույնաբար՝ առանց ծնողների, որդեգրողների կամ խնամակալների մասնակցության: Այդ գործարքների թվին են պատկանում՝

- մանր կենցաղային գործարքները (սննդամթերքի, խաղալիքների, գրքերի և իրենց սպառողական հատկություններով երեխայի տարիքին համապատասխանող ապրանքների գնում),
- անհատույց օգուտ ստանալուն ուղղված և նոտարական վավերացում չպահանջող գործարքները. մասնավորապես, նվերներ ստանալը, բացառությամբ դրամական միջոցների, որոնք երեխային կարող են նվեր տրվել օրինական ներկայացուցիչների համաձայնությամբ, ինչպես նաև այն գույքի, որի նվիրատվությունը պահանջում է նոտարական վավերացում,
- օրինական ներկայացուցիչների կամ նրանց համաձայնությամբ երրորդ անձանց՝ որոշակի նպատակով կամ ազատորեն տնօրինելու համար տրամադրած միջոցները տնօրինելու գործարքները:

Բացի թվարկված գործարքներից, մնացած բոլոր գործարքները 14 տարին չլրացած անչափահասների փոխարեն, նրանց անունից կարող են կնքել միայն նրանց ծնողները, որդեգրողները կամ խնամակալները:

4.1.3. Ո՞վ է պատասխանատվություն կրում փոքրահասակ երեխաների (6-14 տարեկան) կնքած գործարքներով

Փոքրահասակ երեխաների կնքած գործարքներով գույքային պատասխանատվություն կրում են օրինական ներկայացուցիչները՝ ծնողները, որդեգրողները կամ խնամակալները, եթե չեն ապացուցում, որ գործարքի հիման վրա ծագած պարտավորությունը խախտվել է ոչ իրենց մեղքով (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 29–րդ հոդված): Ծնողները, որդեգրողները կամ խնամակալները գույքային պատասխանատվություն են կրում նաև այն գործարքներից բխող պարտավորություններով, որոնք իրենք են կնքել փոքրահասակի անունից:

Որպեսզի օրինական ներկայացուցիչն ազատվի փոքրահասակի կնքած, ինչպես նաև վերջինիս անունից իր կնքած գործարքով գույքային պատասխանատվությունից, նա պետք է ապացուցի, որ պարտավորությունը խախտվել է ոչ իր մեղքով:

4.1.4. Կարո՞ղ է, արդյոք, փոքրահասակ երեխան պատասխանատվություն կրել իր պատճառած վնասի համար

Փոքրահասակ երեխան, ինչպես իր կնքած գործարքներով, այնպես էլ իր գործողություններով պատճառած վնասի համար գույքային պատասխանատվություն կրել չի կարող: Նրա պատճառած վնասի համար գույքային պատասխանատվությունը կրում է ծնողը, որդեգրողը կամ խնամակալը, եթե վերջիններս չեն ապացուցում, որ վնասը պատճառվել է ոչ իրենց մեղքով:

Եթե երեխան վնասը պատճառում է համապատասխան ուսումնական, դաստիարակչական, բուժական կամ սոցիալական այլ հաստատության

խնամքի տակ գտնվելու ժամանակ, և ծնողն այդ ընթացքում չունի երեխային հսկելու իրական հնարավորություն, երեխայի պատճառած նյութական վնասի համար պատասխանատվությունը կրում է տվյալ դաստիարակչական, բուժական և սոցիալական այլ հաստատությունը, որի խնամքի տակ գտնվում է երեխան: Նշյալ հաստատությունները պարտավոր են հատուցել այն վնասը, որը պատճառել է իրենց խնամքի տակ գտնվող երեխան, եթե չապացուցեն, որ վնասը պատճառվել է ոչ իրենց մեղքով: Օրինակ, եթե երեխան դպրոցում կամ մանկապարտեզում գտնվելու ընթացքում նյութական վնաս է պատճառում որևէ մեկի գույքին, ապա այս դեպքում պատճառված վնասը հատուցում է ոչ թե ծնողը, որը զրկված է երեխայի վարքագիծը հսկելու հնարավորությունից, այլ դպրոցի կամ մանկապարտեզի ադմինիստրացիան (եթե, իհարկե, չի ապացուցում, որ վնասը պատճառվել է ոչ իր մեղքով):

Ծնողի կամ նրան փոխարինող անձի մեղք ասելով՝ հասկանում ենք նրանց կողմից երեխայի նկատմամբ պատշաճ հսկողություն չիրականացնելը, երեխայի դաստիարակության նկատմամբ անպատասխանատու վերաբերմունքը, որի արդյունքն է հանդիսացել երեխայի ոչ ճիշտ վարքագիծը:

Երեխայի նկատմամբ խնամք իրականացնող դաստիարակչական, բուժական և սոցիալական այլ հաստատությունների մեղք ասելով հասկանում ենք վնասը պատճառելու պահին երեխայի նկատմամբ խնամք կամ պատշաճ հսկողություն չիրականացնելը:

Եթե ապացուցվում է, որ երեխայի կողմից նյութական վնասը պատճառվել է ինչպես ծնողի կամ նրան փոխարինող անձի, այնպես էլ երեխայի նկատմամբ խնամք իրականացնող դաստիարակչական կամ բուժական հաստատության մեղքով, ապա երկուսն էլ կրում են պատասխանատվություն՝ ըստ իրենց մեղքի աստիճանի:

Ծնողների, որդեգրողների, խնամակալների, ուսումնա-դաստիարակչական և բուժական հաստատությունների՝ մինչև 14 տարեկան երեխաների պատճառած վնասը հատուցելու պարտավորությունը շարունակում է գործել նաև այն ժամանակ, երբ երեխան դառնում է չափահաս կամ ձեռք է բերում տվյալ վնասը հատուցելու համար բավարար միջոցներ (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1067–րդ հոդված): Օրենքը նախատեսում է այս կանոնից հետևյալ շեղումը: Եթե երեխայի պատճառած վնասը հատուցելու պարտավորություն ունեցող անձը մահացել է կամ բավարար միջոցներ չունի վնասը հատուցելու համար, իսկ վնաս պատճառողն ինքը չափահաս դառնալուց հետո ունի վնասը հատուցելու համար բավարար միջոցներ, ապա դատարանը կարող է, հաշվի առնելով վնասը պատճառողի և տուժողի գույքային դրությունը, վնասի հատուցման պարտավորությունը վերապահել վնասը պատճառողին:

Օրինակ.

Հարց: Դպրոցում գտնվելու ժամանակ՝ դասամիջոցին, իմ տասնամյա որդին փողոցում ֆուտբոլ խաղալիս կոտրել է հարևան տան պատուհանը: Պատասխանատվություն կրու՞մ եմ, արդյոք, երեխայիս պատճառած վնասի համար, եթե վնասը պատճառելու պահին զրկված եմ եղել երեխայիս նկատմամբ իրական հսկողություն իրականացնելու հնարավորությունից:

Պատասխան: Նշված դեպքում ծնողը երեխայի պատճառած վնասի

համար պատասխանատվություն չի կրում, քանի որ վնասը պատճառելու պահին երեխան գտնվել է դպրոցի հսկողության տակ:

4.1.5. Փոքրահասակ երեխայի պատճառած վնասի համար պատասխանատվություն կրու՞մ են, արդյոք, երեխայից անջատ ապրող ծնողները

Անկախ նրանից՝ երեխան ապրում է տվյալ ծնողի հետ, թե՝ ոչ, երկու ծնողներն էլ հավասար իրավունքներ և պարտականություններ ունեն երեխայի դաստիարակության հարցում: Ուստի, երեխայի պատճառած վնասի համար հավասարապես պատասխանատու է նաև նրանից անջատ ապրող ծնողը: Բացառություն է կազմում այն իրավիճակը, երբ երեխայից անջատ ապրող ծնողը զրկված է երեխայի դաստիարակությանը մասնակցելու հնարավորությունից՝ մյուս ծնողի մեղքով:

4.1.6. Կարո՞ղ են, արդյոք, 14-18 տարեկան անչափահասներն ինքնուրույնաբար կնքել գործարքներ

14-18 տարեկան երեխաների՝ իրենց գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու ու իրականացնելու և պարտականություններ կատարելու ունակության շրջանակն ավելի լայն է, քան մինչև 14 տարեկան երեխաներինը: Հետևաբար, ավելի լայն է այն գործարքների շրջանակը, որոնք կարող են ինքնուրույնաբար կնքել 14-18 տարեկան երեխաները: Նրանք կարող են ինքնուրույնաբար կնքել այն բոլոր գործարքները, որոնք օրենքը թույլատրում է կնքել առանց օրինական ներկայացուցիչների համաձայնության:

14-18 տարեկան անչափահասներն առանց ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնության իրավունք ունեն.

- տնօրինել իրենց աշխատավարձը, կրթաթոշակը և այլ եկամուտներ,
- իրականացնել գիտության, գրականության կամ արվեստի ստեղծագործության, գյուտի կամ մտավոր գործունեության՝ օրենքով պահպանվող այդ արդյունքի հեղինակի իրավունքներ,
- ավանդներ մուծել վարկային հաստատություններ և տնօրինել դրանք,
- կնքել մանր կենցաղային գործարքներ,
- կնքել անհատույց օգուտ ստանալուն ուղղված և նոտարական վավերացում չպահանջող գործարքներ,
- տնօրինել օրինական ներկայացուցիչների կամ նրանց համաձայնությամբ՝ երրորդ անձանց կողմից որոշակի նպատակով կամ ազատորեն տնօրինելու համար տրամադրված միջոցները:

Վերոհիշյալ գործարքներից բացի, մնացած բոլոր գործարքները 14-18 տարեկան անչափահասները կնքում են ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուների գրավոր համաձայնությամբ:

4.1.7. Կարո՞ղ է, արդյոք, օրինական համարվել առանց օրինական ներկայացուցչի համաձայնության՝ 14-18 տարեկան անչափահասի կնքած այն գործարքը, որի համար օրենքով պահանջվում է օրինական ներկայացուցչի համաձայնությունը

Այն դեպքում, երբ 14-18 տարեկան անչափահասն առանց ծնողների,

որդեգրողի կամ հոգաբարձուի համաձայնության կնքում է այնպիսի գործարք, որի համար օրենքով պահանջվում է նշյալ անձանց գրավոր համաձայնությունը, այդ գործարքն անվավեր ճանաչելու հայցով կարող է դատարան դիմել այն անձը, որի գրավոր համաձայնությունը պահանջվում էր գործարքը կնքելու համար: Նման հայցով պատասխանող է հանդիսանում այն անձը, որի հետ 14-18 տարեկան անչափահասը կնքել է գործարքը:

4.1.8. Կարո՞ղ են, արդյոք, 14-18 տարեկան անչափահասները պատասխանատվություն կրել իրենց կնքած գործարքներով և իրենց պատճառած նյութական վնասի համար

Ի տարբերություն փոքրահասակ երեխաների, 14-18 տարեկան անչափահասները, ունենալով գործունակության ավելի մեծ ծավալ, պատասխանատվություն են կրում ինչպես իրենց կնքած գործարքներով, այնպես էլ իրենց պատճառած նյութական վնասի համար: Սակայն, այն դեպքում, երբ 14-18 տարեկան անչափահասը չունի բավարար նյութական միջոցներ նյութական վնասը վերականգնելու համար, վնասի հատուցմանը մասնակից են դառնում նաև անչափահասի օրինական ներկայացուցիչները: Վերջիններս վնասը հատուցում են ամբողջությամբ կամ այն մասով, որը չի կարող հատուցվել վնասը պատճառած անչափահասի միջոցների հաշվին, եթե չապացուցեն, որ վնասը պատճառվել է ոչ իրենց մեղքով (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1068–րդ հոդված):

Այն դեպքում, երբ 14-18 տարեկան անչափահասը գտնվում է համապատասխան ուսումնադաստիարակչական, բուժական կամ սոցիալական այլ հաստատության խնամքի տակ, ապա նրա պատճառած վնասը հատուցելու պարտավորություն կրում է նաև այդ հաստատության ադմինիստրացիան, եթե տվյալ անչափահասը բավարար միջոցներ չունի վնասը հատուցելու համար:

Օրինակ.

Հարց: 13 տարեկան հասակում տղաս հարվածելով ընկերոջը՝ վնաս է պատճառել նրա տեսողությանը: Երկու տարի անց տուժողը հայց է ներկայացրել է դատարան՝ բժշկական ծախսերը փոխհատուցելու պահանջով: Այժմ տղաս ուսումնարանում ստանում է կրթաթոշակ: Պարտավո՞ր եմ, արդյոք, հատուցել տղայիս պատճառած վնասը, թե՞ վնասի հատուցումը կարող է կատարվել տղայիս կրթաթոշակի հաշվին:

Պատասխան: Այն հանգամանքը, որ վնաս պատճառած երեխան, վնասի հատուցման պահանջ ներկայացնելու պահին ավելի քան 14 տարեկան է և ստանում է կրթաթոշակ, ծնողին չի ազատում վնասի հատուցման պարտավորությունից: Մինչև 14 տարեկան երեխայի պատճառած վնասի համար ծնողը շարունակում է պատասխանատվություն կրել նաև երեխայի 14 տարեկան դառնալուց հետո:

4.1.9. Շարունակու՞մ են, արդյոք, օրինական ներկայացուցիչները գույքային պատասխանատվություն կրել 14-18 տարեկան անչափահասի պատճառած վնասի համար, երբ վերջինս հասնում է չափահասության

տարիքի

Ի տարբերություն փոքրահասակ երեխաների պատճառած վնասի համար պատասխանատվության, 14-18 տարեկան անչափահասների պատճառած վնասի համար՝ ինչպես նրանց օրինական ներկայացուցիչների, այնպես էլ համապատասխան ուսումնադաստիարակչական և բուժական հիմնարկների պատասխանատվությունը դադարում է վնասը պատճառած անձի չափահաս դառնալով: Ավելին, օրինական ներկայացուցիչները և նշված հաստատությունները դադարում են լրացուցիչ պատասխանատվություն կրել 14-18 տարեկան անչափահասների պատճառած վնասի համար նաև այն դեպքում, երբ մինչև չափահաս դառնալը վնասը պատճառած անչափահասը ձեռք է բերում գույքային միջոցներ, որոնք բավարար են վնասը հատուցելու համար:

Օրինակ.

Հարց: 17 տարեկան հասակում տղաս նյութական վնաս է պատճառել հարևանին՝ հեծանիվով բախվելով նրա ավտոմեքենային: Տուժողը վնասի հատուցման պահանջ է ներկայացրել տղայիս 18-ին տարին լրանալուց անմիջապես հետո: Պարտավո՞ր եմ, արդյոք, հատուցել տղայիս պատճառած վնասը:

Պատասխան: Ծնողը տվյալ դեպքում պարտավոր չէ հատուցել իր երեխայի պատճառած վնասը: Վնաս պատճառած երեխայի չափահաս դառնալով դադարում է ծնողի՝ իր երեխայի պատճառած վնասը հատուցելու պարտավորությունը:

2. ԾՆՈՂՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԵՐԵԽԱՅԻ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ

4.2.1. Ո՞վքեր են երեխայի օրինական ներկայացուցիչները

Երեխայի օրինական ներկայացուցիչներն են.

- ծնողները,
- որդեգրված լինելու դեպքում՝ որդեգրողները,
- մինչև 14 տարեկան երեխաների համար՝ խնամակալները,
- 14-18 տարեկան երեխաների համար՝ հոգաբարձուները:

Այն դեպքում, երբ երեխան ծնվել է չգրանցված ամուսնությունից և որոշված չէ երեխայի հայրությունը, երեխայի օրինական ներկայացուցիչ է հանդիսանում միայն մայրը: Երկու անձի որդեգրած երեխայի օրինական ներկայացուցիչ են հանդիսանում երկու որդեգրողները:

Քանի որ անչափահասներն ի վիճակի չեն իրենց իրավունքներն ու շահերը պաշտպանել ինքնուրույնաբար, նրանց իրավունքների և շահերի պաշտպանությամբ, առանց հատուկ լիազորության, ցանկացած անձի և մարմնի հետ հարաբերություններում, այդ թվում նաև՝ դատարանում, հանդես են գալիս նրանց օրինական ներկայացուցիչները: Մինչև 14 տարեկան երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը օրինական ներկայացուցիչներն իրականացնում են լրիվ ծավալով, իսկ 14-18 տարեկան անչափահասներին օրինական ներկայացուցիչներն աջակցություն են ցույց տալիս իրենց իրավունքների և շահերի պաշտպանության գործում:

4.2.2. Ո՞ր դեպքերում է հնարավոր երեխաների շահերը ներկայացնելիս օրինական ներկայացուցիչների իրավունքների սահմանափակում

Երեխայի ծնողները, որդեգրողները, խնամակալները և հոգաբարձուներն իրավունք չունեն ներկայացնելու երեխային այնպիսի գործարքներ կնքելիս կամ այնպիսի դատական վեճում, որտեղ կողմերից մեկը երեխան է, իսկ մյուսը՝ օրինական ներկայացուցչի (ծնողի, որդեգրողի, խնամակալի կամ հոգաբարձուի) ամուսինը կամ մերձավոր ազգականը (ՀՀ ԱԸՕ, 167-րդ հոդված):

Երեխայի շահերը ներկայացնել չեն կարող ծնողական իրավունքներից զրկված ծնողները:

§3. ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

4.3.1. Ի՞նչ գույք կարող են անչափահասներն ունենալ որպես սեփականություն

Շատ դեպքերում քաղաքացիները սխալմամբ կարծում են, որ երեխաները կարող են որպես սեփականություն ունենալ միայն այնպիսի գույք, որն իր սպառողական հատկություններով համապատասխանում է երեխայի տարիքին: Մինչդեռ, անկախ տարիքից, յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի որպես սեփականություն գույք ունենալու:

Երեխան որպես սեփականություն կարող է ունենալ ցանկացած գույք (բացառությամբ այն գույքի, որը քաղաքացիական շրջանառությունից դուրս է), այդ թվում՝ ինչպես շարժական, այնպես էլ անշարժ գույք, կանխիկ դրամական միջոցներ, բանկային ավանդներ: Երեխան կարող է լինել ավտոմեքենայի, բնակարանի և նույնիսկ արտադրական համալիրի սեփականատեր:

Սեփականության իրավունքը ներառում է երեք հիմնական իրավասություն՝ սեփականության իրավունքով անձին պատկանող գույքի տիրապետում, օգտագործում և տնօրինում:

Քանի որ անչափահասներն օժտված չեն լիարժեք գործունակությամբ և սեփական գործողություններով քաղաքացիական իրավունքներ իրականացնելու, ինչպես նաև պարտականություններ կատարելու նրանց հնարավորությունը սահմանափակ է, նրանք ոչ բոլոր դեպքերում կարող են իրականացնել սեփականատիրոջ իրավունքները և կրել սեփականության հետ կապված պարտավորություններ:

Օրինակ.

Հարց: Հայրս իր պտղատու այգին կտակել է իմ 5-ամյա որդուն: Ո՞վ պետք է դառնա այդ այգու սեփականատերը մինչև որդուս չափահաս դառնալը և ո՞վ պետք է կառավարի այն:

Պատասխան: Ժառանգատուի կտակի հիման վրա նրա տան սեփականատեր պետք է դառնա 5-ամյա թոռը՝ չնայած իր փոքրահասակ տարիքին: Սակայն, այգու կառավարումը, սեփականատիրոջ փոքրահասակ լինելու պատճառով պետք է իրականացնեն նրա ծնողները: Ծնողների կողմից իրենց փոքրահասակ երեխայի սեփականություն հանդիսացող գույքի կառավարման իրավունքը, այնուամենայնիվ, նրանց չի տալիս այգին իրենց հայեցողությամբ տնօրինելու իրավունք: Նրանք կարող են այգին վաճառել, նվիրել, փոխանակել կամ այգու հետ կապված

որևէ այլ գործարք կատարել միայն խնամակալության և հոգաբարձության մարմնի թույլտվությամբ:

4.3.2. Ո՞վ է իրականացնում անչափահասի գույքային իրավունքները

Ի թիվս այլ իրավունքների՝ սեփականատերն իրավունք ունի օտարել իր գույքն այլ անձանց, նրանց փոխանցել իր իրավունքների մի մասը, օգտագործման իրավունքը, տիրապետման իրավունքը, գույքը գրավ դնել: Սեփական գույքի տնօրինման իրավունքը հիմնականում իրականացվում է գործարքների միջոցով, որոնց կնքման համար անձը պետք է օժտված լինի բավարար գործունակությամբ: Անչափահասները, որոնք օժտված չեն բավարար գործունակությամբ, չեն կարող ինքնուրույնաբար կնքել իրենց սեփականությունը հանդիսացող գույքի տնօրինմանն ուղղված գործարքներ: Ուստի անչափահասներին սեփականության իրավունքով պատկանող գույքը տնօրինում են նրանց օրինական ներկայացուցիչները: Սակայն, հաշվի առնելով երեխայի շահերը՝ երեխայի գույքը տնօրինելու՝ երեխայի օրինական ներկայացուցիչների իրավունքը բացարձակ չէ. այդ իրավունքը վերահսկում են խնամակալության և հոգաբարձության մարմինները, և կարող է իրականացվել միայն ի շահ երեխայի:

Մինչև երեխայի 14 տարին լրանալը երեխայի օրինական ներկայացուցիչները չեն կարող երեխային սեփականության իրավունքով պատկանող գույքը տնօրինելու գործարք կնքել, իսկ 14 տարին լրանալուց հետո՝ նման գործարք կնքելու համար իրենց համաձայնությունը տալ՝ առանց խնամակալության և հոգաբարձության մարմնի թույլտվության:

Այսպես, երեխայի օրինական ներկայացուցիչները երեխային սեփականության իրավունքով պատկանող գույքը փոխանակելիս, վաճառելիս, վարձակալության տալիս, գրավ դնելիս՝ պետք է ստանան խնամակալության և հոգաբարձության մարմնի նախնական թույլտվությունը:

4.3.3. Արդյո՞ք երեխաները և ծնողները սեփականության իրավունք են ձեռք բերում միմյանց գույքի նկատմամբ

Երեխան սեփականության իրավունք չունի ծնողի սեփականություն հանդիսացող գույքի նկատմամբ: Նմանապես ծնողը սեփականության իրավունք չունի սեփականության իրավունքով իր երեխային պատկանող գույքի նկատմամբ:

ԳԼՈՒԽ 5. ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՁԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

5.1. Ո՞ր տարիքից անչափահասը կարող է աշխատանքի ընդունվել

Ընդհանուր կանոնի համաձայն՝ աշխատանքի կարող է ընդունվել 16 տարին լրացած անձը (ՀՀ աշխատանքային օրենսգիրք, 198-րդ հոդված): Սակայն գոյություն ունի այս կանոնից բացառություն. բացառիկ դեպքերում, հիմնարկի, ձեռնարկության, կազմակերպության արհմիութենական կոմիտեի համաձայնությամբ, կարող են աշխատանքի ընդունվել նաև 15 տարին լրացած անչափահասները:

Առաջին անգամ օրենսդրությունն ամրագրել է անչափահասների՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու, այն է՝ ինքնուրույն, սեփական ռիսկով իրականացվող գործունեություն ծավալելու իրավունքը, որի հիմնական նպատակը գույքի օգտագործումից, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է: 16 տարին լրացած անչափահասը ձեռնարկատիրական գործունեությամբ կարող է զբաղվել ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուների համաձայնությամբ:

Քաղաքացիական օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ ինչպես աշխատանքային պայմանագրով աշխատող, այնպես էլ օրինական ներկայացուցիչների համաձայնությամբ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող 16 տարին լրացած անչափահասն օրենքով սահմանված կարգով կարող է ճանաչվել լրիվ գործունակ, այն է՝ լրիվ ծավալով՝ իր գործողություններով ձեռք բերել ու իրականացնել քաղաքացիական իրավունքներ և իր համար ստեղծել քաղաքացիական պարտականություններ ու կատարել դրանք:

5.2. Ի՞նչ սահմանափակումներ են գործում անչափահասին աշխատանքի ընդունելիս

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին 1966թ. միջազգային դաշնագիրը (Հայաստանի Հանրապետությունը միացել է 09.06.1993թ.) դաշնագրի մասնակից պետություններին պարտավորեցնում է սահմանել տարիքային սահմանափակումներ, որից ցածր տարիքի երեխայի վճարովի աշխատանքն արգելվում է և պատժվում օրենքով: Ըստ դաշնագրի՝ օրենքով պատժելի պետք է լինի նաև երեխաների բարոյականության կամ առողջության համար վնասակար, կամ կյանքի համար վտանգավոր, կամ բնականոն զարգացման համար հնարավոր վնասակար բնագավառում նրանց աշխատանքի օգտագործումը:

Օրենքով սահմանված են անչափահասին աշխատանքի ընդունելու հետ կապված որոշակի սահմանափակումներ, որոնք պայմանավորված են անչափահասների առողջության նկատմամբ հոգածությամբ: ՀՀ աշխատանքային օրենսգրքի 200-րդ հոդվածն արգելում է տասնութ տարին չլրացած անձանց աշխատանքի կիրառումը ծանր աշխատանքներում, աշխատանքի վնասակար կամ վտանգավոր պայմաններ ունեցող աշխատանքներում և ստորերկրյա աշխատանքներում:

5.3. Ի՞նչ արտոնություններ ունեն անչափահասներն աշխատանքային ռեժիմում

Աշխատանքային ռեժիմում անչափահասներին տրամադրվող առաջին խումբ արտոնությունները վերաբերում են անչափահասների համար կրճատ աշխատաժամանակ սահմանելուն: ՀՀ աշխատանքային օրենսգրքի 45-րդ հոդվածի համաձայն՝ 16-18 տարեկան բանվորների ու ծառայողների աշխատաժամանակը շաբաթական 36 ժամ է, իսկ 15-16 տարեկաններինը՝ շաբաթական 24 ժամ: Ընդ որում, ամենօրյա աշխատանքի կրճատ տևողություն կիրառելիս՝ աշխատավարձը վճարվում է նույն չափով, ինչ համապատասխան կատեգորիաների չափահաս բանվորներին և ծառայողներին՝ լրիվ տևողությամբ ամենօրյա աշխատանքի համար:

Արգելվում է անչափահասների ներգրավումն արտաժամյա աշխատանքներում, հանգստյան օրերին և գիշերային ժամանակ կատարվող աշխատանքներում (գիշերային ժամանակ է համարվում երեկոյան ժամը 10-ից մինչև առավոտյան ժամը 6-ը) (ՀՀ աշխատանքային օրենսգիրք, 202-րդ հոդված):

Լրացուցիչ արտոնություններ են սահմանված այն անչափահաս բանվորների և ծառայողների համար, որոնք աշխատանքը համատեղում են ուսման հետ: Երեկոյան և հեռակա միջնակարգ հանրակրթական դպրոցներում սովորող՝ արտադրությունից չկտրված անչափահաս բանվորների և ծառայողների համար սահմանվում է մեկ օրով կրճատված աշխատանքային շաբաթ, իսկ գյուղերի դպրոցներում սովորողների համար՝ երկու օրով կրճատված աշխատանքային շաբաթ:

Երեկոյան և հեռակա բարձրագույն ուսումնական հաստատություններում, ինչպես նաև միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողները դիպլոմային նախագծի կատարմանը կամ պետական քննությունների հանձնմանը նախորդող 10 ուսումնական ամիսների ընթացքում իրավունք ունեն՝ վեցօրյա աշխատանքային շաբաթի դեպքում, պարապմունքներին պատրաստվելու համար, շաբաթվա մեջ մեկ օր աշխատանքից ազատվելու՝ աշխատավարձի 50 տոկոսի, բայց ոչ պակաս, քան նվազագույն աշխատավարձի վճարումով:

5.4. Ի՞նչ կարգով է անչափահաս բանվորին և ծառայողին արձակուրդ տրամադրվում

Ընդհանուր կանոնի համաձայն՝ բանվորներին և ծառայողներին աշխատանքի առաջին տարվա համար արձակուրդ տրվում է տվյալ ձեռնարկությունում, հիմնարկում, կազմակերպությունում անընդհատ աշխատանքի տասնմեկ ամիսը լրանալուց հետո: Այս կապակցությամբ ևս օրենսդրությունն անչափահասների համար նախատեսում է արտոնություն: Անչափահաս բանվորներին և ծառայողներին, իրենց խնդրանքով, ամենամյա արձակուրդ տրամադրվում է նաև մինչև նշված տասնմեկամսյա ժամկետը լրանալը (ՀՀ աշխատանքային օրենսգիրք, 76-րդ հոդված):

Անչափահաս բանվորների և ծառայողների համար արտոնություն է սահմանված նաև ամենամյա արձակուրդի տևողության կապակցությամբ:

Տասնութ տարին չլրացած բանվորներին ու ծառայողներին ամենամյա արձակուրդ տրվում է մեկ օրացուցային ամիս տևողությամբ (ՀՀ աշխատանքային օրենսգիրք, 73-րդ հոդված):

5.5. Ի՞նչ լրացուցիչ արձակուրդներ են տրվում աշխատանքն ուսման հետ համատեղող անչափահասներին

Բացի ամենամյա արձակուրդից, աշխատանքն ուսման հետ համատեղող անչափահասներին տրամադրվում են նաև լրացուցիչ արձակուրդներ: Առանց արտադրությունից կտրվելու՝ երեկոյան և հեռակա միջնակարգ հանրակրթական դպրոցներում սովորող անչափահաս բանվորներին և ծառայողներին ավարտական քննություններ հանձնելու ժամանակաշրջանում տրվում է արձակուրդ 10-րդ դասարանում՝ 20 աշխատանքային օր, իսկ 8-րդ դասարանում՝ 8 աշխատանքային օր:

Աշխատավարձի պահպանմամբ լրացուցիչ արձակուրդներ են տրվում նաև բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում ընդունելության քննությունների թույլատրված բանվորներին և ծառայողներին: Այդ լրացուցիչ արձակուրդների տևողությունը բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվողների համար 15 օրացուցային օր է, իսկ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունվողների համար՝ 10 օրացուցային օր:

ԳԼՈՒԽ 6. ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

§1. ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ

6.1.1. Ո՞ր տարիքից է անձը ենթակա քրեական պատասխանատվության

Ընդհանուր կանոնի համաձայն՝ քրեական պատասխանատվության ենթակա են այն անձինք, որոնց 16 տարին լրացել է մինչև հանցագործության կատարումը: Սակայն քրեական օրեսգիրքը սահմանում է այն հանցագործությունների սպառիչ ցանկը, որոնց համար քրեական պատասխանատվությունը ծագում է 14 տարեկանից: Այդ հանցագործությունների թվին են դասվում սպանությունը, դիտավորությամբ մարմնական վնասվածքներ հասցնելը, գողությունը, կողոպուտը, ավազակությունը, շորթումը, չարամիտ խուլիգանությունը, թմրանյութեր, հրազեն, ռազմամթերք կամ պայթուցիկ նյութեր հափշտակելը: Նշյալ հանցագործությունները, որոնց համար քրեական պատասխանատվությունը վրա է հասնում 14 տարեկանից, քրեական օրենքում սահմանված են այնպիսի չափանիշներից ելնելով, ինչպիսին է՝ արարքի հասարակական վտանգավորության ակնհայտությունը:

Փոքրահասակները, այն է՝ մինչև 14 տարեկան երեխաները, քրեական պատասխանատվության ենթակա չեն իրենց կատարած հանրորեն վտանգավոր արարքի համար, քանզի ընդունակ չեն գիտակցելու իրենց գործողությունների վտանգավորությունը և ղեկավարելու դրանք:

Օրենքում ամրագրված նվազագույն տարիքային սահմանը պահանջում է ճշգրիտ որոշել հանցանք կատարած անձի տարիքը: Այս հարցը լուծվում է համապատասխան փաստաթղթերի հիման վրա: Տարիքը որոշվում է անձի ծննդյան օրվա ավարտման պահով, այսինքն՝ օրենքով սահմանված տարիքը համարվում է լրացած նրա ծննդյան օրվա հաջորդ օրը: Անձի ծննդյան օրը հավաստող փաստաթղթերի բացակայության դեպքում տարիքը սահմանվում է դատաբժշկական փորձաքննությամբ:

6.1.2. Ի՞նչ առանձնահատկություններ ունի անչափահասների քրեական պատասխանատվությունը համաձայն ՀՀ քրեական օրենսդրության

Պայմանավորված անչափահասների հանցավորության յուրահատկություններով և անչափահասների սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններով՝ ՀՀ քրեական օրենսգիրքը սահմանում է անչափահասների քրեական պատասխանատավության որոշակի առանձնահատկություններ: Վերջիններս հանգում են հետևյալին.

- այնպիսի պատիժների նշանակում, որոնք կարող են կիրառվել անչափահասների նկատմամբ՝ հաշվի առնելով յուրաքանչյուր անչափահասի կյանքի և դաստիարակության պայմանները, հոգեկան զարգացման աստիճանը, առողջության վիճակը,
- անչափահասների քրեական պատասխանատավության և պատժի փոխարինում դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների

կիրառումով,
- պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատում կամ նրանց նկատմամբ նշանակված պատժի՝ ավելի մեղմ պատժով փոխարինում:

6.1.3. Ի՞նչ առանձնահատկություններ ունի անչափահաս դատապարտյալի նկատմամբ ազատազրկման կիրառումը

Անչափահասի նկատմամբ կիրառվող ազատազրկման ժամկետը ենթակա է որոշակի սահմանափակման: ՀՀ քրեական օրենսգրքի 23-րդ հոդվածի համաձայն, մինչև հանցագործություն կատարելը 18 տարին չլրացած անձի նկատմամբ պատիժ նշանակելիս՝ ազատազրկման ժամկետը չի կարող տասը տարուց ավելի լինել:

6.1.4. Կարո՞ղ է, արդյոք, անչափահասի նկատմամբ մահապատիժ կիրառվել

Համաձայն ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածի, մահապատիժը՝ մինչև դրա վերացումը, որպես բացառիկ պատժամիջոց, կարող է սահմանվել օրենքով՝ առանձնապես ծանր հանցագործությունների համար: Սահմանադրական այս դրույթին համապատասխան՝ ՀՀ քրեական օրենսգրքի 22-րդ հոդվածը սահմանում է այն հանցագործությունների ցանկը, որոնց դեպքում միայն կարող է կիրառվել մահապատիժ, ինչպես նաև սահմանում է այն անձանց կատեգորիաները, որոնց նկատմամբ մահապատժի կիրառումն արգելվում է: Նշյալ դրույթի համաձայն՝ մինչև հանցագործություն կատարելը 18 տարին չլրացած անձինք չեն կարող մահապատժի ենթարկվել:

6.1.5. Ո՞ր դեպքերում են անչափահասի քրեական պատասխանատվությունը և նրա նկատմամբ պատժի կիրառումը փոխարինվում դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներով

Անչափահասների նկատմամբ արդարադատության իրականացման վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները նախատեսում են, որ անչափահաս իրավախախտների նկատմամբ քրեական գործերի քննության ժամանակ, հնարավորության սահմաններում, պետք է փորձել գործը կարճել նախաքննության փուլում՝ մինչև գործի դատական քննությունը: Նման մոտեցումը նպատակ ունի անչափահասներին ազատել քրեական գործի այնպիսի բացասական հետևանքներից, ինչպիսիք են դատվածությունը, դատավճռի խարանը: Դա հատկապես վերաբերում է ոչ լուրջ խախտումների հետ կապված գործերին, երբ ընտանիքը, դպրոցը և ոչ պաշտոնապես սոցիալական վերահսկողություն իրականացնող այլ ինստիտուտներ ձեռնարկում են իրավախախտ անչափահասի վարքագծի ուղղման պատշաճ միջոցներ:
Համաձայն ՀՀ քրեական օրենսդրության, եթե դատարանը անչափահասի կատարած հանցագործության վերաբերյալ քրեական գործի քննության արդյունքում գտնում է, որ մինչև 18 տարեկան դառնալը հասարակական մեծ վտանգավորություն չներկայացնող հանցանք կատարած անձի ուղղվելը հնարավոր է առանց քրեական պատիժ կիրառելու, ապա դատարանը նման անձի նկատմամբ կարող է կիրառել դաստիարակչական

բնույթի այնպիսի հարկադրանքի միջոցներ, որոնք քրեական պատիժ չեն համարվում (ՀՀ քրեական օրենսգիրք, 10-րդ հոդված): Նշված հիմքերի առկայության դեպքում դատարանը, դատախազը կամ քննիչը կարող են անչափահասին ազատել քրեական պատասխանատվությունից՝ նրան վերաբերող նյութերն ուղարկելով անչափահասների գործերի հանձնաժողով՝ անչափահասի նկատմամբ դաստիարակչական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու համար:

Անչափահասների նկատմամբ դաստիարակչական բնույթի հարկադրական միջոցների կիրառումը նշանակում է քրեական պատասխանատվությունից կամ պատժից նրանց ազատում: Պատժից այդ միջոցների հիմնական տարբերությունը այն է, որ դրանք դատվածություն չեն առաջացնում, և հետագայում չեն կարող հաշվի առնվել պատիժ կամ քրեաիրավական ներգործության այլ միջոցներ կիրառելիս:

6.1.6. Որո՞նք են անչափահասների նկատմամբ կիրառվող դաստիարակչական բնույթի հարկադրական միջոցները

Դատարանը, օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում, անչափահասին ազատելով քրեական պատժից, կարող է նշանակել դաստիարակչական բնույթի հետևյալ հարկադրական միջոցները (ՀՀ քրեական օրենգիրք, 58-րդ հոդված).

- հրապարակայնորեն կամ դատարանի կողմից սահմանված այլ ձևով տուժողից ներողություն խնդրելու պարտավորություն դնելը,
- նկատողություն կամ խիստ նկատողություն հայտարարելը,
- նախազգուշացում,
- անչափահասին ծնողների կամ նրանց փոխարինող անձանց խիստ հսկողությանը հանձնելը,
-անչափահասին հատուկ ուսումնադաստիարակչական կամ բուժդաստիարակչական հիմնարկում տեղավորելը:

Նախազգուշացումն անչափահասին՝ իր արարքով պատճառված վնասի և հանցանքի կրկնակի կատարման հետևանքների պարզաբանումն է:

Ծնողներին կամ նրանց փոխարինող անձանց հսկողությանը հանձնելը՝ անչափահասի նկատմամբ դաստիարակչական ներգործության և նրա վարքագծի նկատմամբ հսկողության պարտականություն դնելն է:

6.1.7. Անչափահասին ազատազրկման ձևով պատիժ նշանակելիս ինչպե՞ս է որոշվում ուղղիչ հիմնարկի տեսակը

Ելնելով քրեակատարողական օրենսդրության այն սկզբունքի պահանջից, որ ուղղիչ հիմնարկներում չափահաս և անչափահաս դատապարտյալները պահվում են առանձին՝ անչափահաս դատապարտյալները ազատազրկման ձևով նշանակված պատիժը կրում են ընդհանուր և ուժեղացված ռեժիմի դաստիարակչական ուղղիչ գաղութներում: Ընդհանուր ռեժիմի դաստիարակչական ուղղիչ գաղութներում պատիժ կրում են առաջին անգամ դատապարտված

արական սեռի անչափահաս դատապարտյալները, ինչպես նաև իգական սեռի անչափահաս դատապարտյալները: Ուժեղացված ռեժիմի դաստիարակչական ուղղիչ գաղութներում պատիժ կրում են նախկինում ազատազրկման ձևով պատիժը կրած արական սեռի անչափահասները:

Դաստիարակչական ուղղիչ գաղութներում պատիժը կրող դատապարտյալներն ունեն հետևյալ իրավունքները.

- ամսվա ընթացքում ունենալ մեկ կարճատև տեսակցություն,
- ամսվա ընթացքում ստանալ մեկ ծանրոց,
- ստանալ և ուղարկել անսահմանափակ քանակությամբ նամակներ և ամսական ստանալ ոչ ավելի քան մեկ փաթեթ:

Ազատազրկման դատապարտված՝ տասնութ տարին լրացած անձինք, որպես կանոն, թողնվում են դաստիարակչական ուղղիչ գաղութներում, բայց մինչև նրանց 21 տարին լրանալը:

6.1.8. Որո՞նք են անչափահաս դատապարտյալների նկատմամբ պատժից պայմանական վաղակետ ազատում կիրառելու առանձնահատկությունները

Համաձայն Անչափահասների նկատմամբ արդարադատության իրականացման վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնների, պատժից պայմանական վաղակետ ազատումը անչափահասների նկատմամբ կիրառվում է հնարավորինս լայն ընդգրկումով և հնարավորինս վաղ ժամկետում:

ՀՀ քրեական օրենսգիրքը սահմանում է անչափահասներին պատժի կրումից պայմանական վաղակետ ազատելու որոշակի առանձնահատկություններ:

Ընդհանուր կանոնի համաձայն՝ չափահաս դատապարտյալների նկատմամբ կարող է կիրառվել պատժից վաղակետ ազատելու կամ պատժի չկրած մասի՝ ավելի մեղմ պատժով փոխարինում, երբ դատապարտյալը փաստորեն կրել է պատժի նշանակված ժամանակի ոչ պակաս, քան մեկ երրորդը: ՀՀ քրեական օրենսգիրքը սահմանում է անչափահաս դատապարտյալներին պատժից վաղակետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելու համար պահանջվող՝ փաստորեն կրած պատժի ավելի կարճ ժամկետ: Ընդհանուր կանոնի համաձայն (ՀՀ քրեական օրենսգրքի 50-րդ հոդված)՝ մինչև 18 տարեկան դառնալը կատարած հանցագործության համար դատապարտվածների նկատմամբ պատժից պայմանական վաղակետ ազատում կամ պատժի չկրած մասի՝ ավելի մեղմ պատժով փոխարինում կարող է կիրառվել, երբ նրանք փաստորեն կրել են պատժի նշանակված ժամանակի ոչ պակաս, քան մեկ քառորդը:

Անչափահասին պատժից պայմանական վաղակետ ազատումը կամ պատժի չկրած մասի՝ ավելի մեղմ պատժով փոխարինում կիրառում է դատապարտյալի՝ պատիժը կրելու վայրի դատարանը՝ պատժի կատարումը տնօրինող մարմնի և անչափահասների գործերի հանձնաժողովի համատեղ միջնորդագրով:

Գ2. ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐ

6.2.1. Ի՞նչ առանձնահատկություններ ունի անչափահասների գործերով վարույթը

Հաշվի առնելով անչափահասների սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկությունները՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը սահմանում է անչափահասների գործերով վարույթի հետևյալ առանձնահատկությունները.

- անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի, ինչպես նաև վկայի հարցաքննության հատուկ կարգ,
- անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցների ընտրության նկատմամբ առանձին մոտեցում,
- անչափահասների գործերով վարույթին պաշտպանի մասնակցության հատուկ կանոններ:

6.2.2. Պարտադի՞ր է, արդյոք, պաշտպանի մասնակցությունն անչափահասների գործերով վարույթին

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածը սահմանում է այն դեպքերը, երբ քրեական գործերով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է: Ի թիվս այլ դեպքերի, պաշտպանի մասնակցությունը քրեական գործերով վարույթին պարտադիր է համարվում այն դեպքում, երբ հանցանքը կատարելու պահին կասկածյալը կամ մեղադրյալն անչափահաս է:

6.2.3. Իրավունք ունի՞, արդյոք, անչափահաս կասկածյալը կամ մեղադրյալը հրաժարվելու պաշտպանից

Անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի՝ պաշտպանից հրաժարվելը պարտադիր չէ քրեական վարույթն իրականացնող մարմնի համար: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի համաձայն՝ քրեական վարույթն իրականացնող մարմինն իրավունք ունի չընդունել պաշտպանից կասկածյալի կամ մեղադրյալի հրաժարվելը և նշանակել պաշտպան կամ պահպանել նշանակված պաշտպանի լիազորությունները:

6.2.4. Ի՞նչ կարգով է իրականացվում անչափահաս վկայի հարցաքննությունը

Քրեադատավարական օրենսդրությունը նախատեսում է մինչև 14 տարեկան՝ փոքրահասակ երեխաների հարցաքննության հնարավորությունը, և չի նախատեսում նվազագույն տարիք, որից սկսած անձը կարող է հարցաքննվել որպես վկա: Սակայն, հաշվի առնելով երեխայի հոգեբանության առանձնահատկությունները՝ իրավապահ մարմինները փորձում են փոքրահասակներին հարցաքննել ծայրահեղ դեպքերում:

Մինչև տասնչորս տարեկան փոքրահասակ վկայի, իսկ քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ՝ մինչև տասնվեց տարեկան անչափահաս վկայի հարցաքննությունը կատարվում է օրինական ներկայացուցչի՝ ծնողի, որդեգրողի կամ խնամակալի ներկայությամբ:

Տասնվեց տարին չլրացած վկային բացատրելով իր իմացածի մասին

ճշմարտացիորեն պատմելու պարտականությունը, ի տարբերություն տասնութ տարին լրացած վկայի, նա չի նախազգուշացվում ցուցմունքներ տալուց հրաժարվելու կամ խուսափելու և ակնհայտ սուտ ցուցմունքներ տալու համար սահմանված պատասխանատվության մասին. մինչև տասնվեց տարեկան անչափահասը չի կարող պատասխանատվության ենթարկվել ցուցմունքներ տալուց հրաժարվելու կամ խուսափելու կամ ակնհայտ սուտ ցուցմունքներ տալու համար:

6.2.5. Կարո՞ղ է, արդյոք, անչափահասի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել կալանքը

Անչափահասների նկատմամբ արդարադատության իրականացման վերաբերյալ՝ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոններն անչափահասի նկատմամբ կալանքի կիրառումը թույլատրում են միայն որպես ծայրահեղ միջոց: Համաձայն այդ կանոնների, մինչև գործի դատական քննությունը կալանքը հնարավորինս փոխարինվում է այլընտրանքային միջոցներով, ինչպիսիք են մշտական հսկողությունը, դաստիարակչական ակտիվ աշխատանքները կամ ընտանիքում, դաստիարակչական հիմնարկներում տեղավորելը:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, անչափահաս մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառել թույլատրվում է միայն այն դեպքերում, երբ նա մեղադրվում է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի կատարման մեջ:

Ծանոթություն: Խափանման միջոցները կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ կիրառվող հարկադրանքի միջոցներ են, որոնք կիրառվում են այն դեպքում, երբ առկա է կասկածյալի կամ մեղադրյալի՝ քննությունից կամ դատարանից թաքնվելու, հանցագործության կատարումը շարունակելու վտանգ: Խափանման միջոցներ են՝ կալանավորումը, գրավը, ստորագրությունը չհեռանալու մասին, անձնական երաշխավորությունը, կազմակերպության երաշխավորությունը, հսկողության հանձնելը, հրամանատարության հսկողությանը հանձնելը:

6.2.6. Գոյություն ունե՞ն, արդյոք, անչափահասների նկատմամբ կիրառվող խափանման հատուկ միջոցներ

Անչափահասների նկատմամբ կիրառվող խափանման հատուկ միջոց է հսկողության հանձնելը: Վերջինիս բովանդակությանն այն է, որ անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի ծնողների, խնամակալների, հոգաբարձուների կամ փակ մանկական հիմնարկների վարչակազմի վրա, որտեղ նա պահվում է, պարտականություն է դրվում ապահովել կասկածյալի կամ մեղադրյալի պատշաճ վարքագիծը, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով ներկայանալը և դատավարական այլ պարտականությունների կատարումը:

6.2.7. Անչափահասի նկատմամբ դատավճիռ կայացնելիս դատարանը ի՞նչ սկզբունքներով պետք է առաջնորդվի

Անչափահասների նկատմամբ արդարադատության իրականացման

վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները սահմանում են անչափահասի նկատմամբ դատավճռի կայացման հետևյալ ղեկավար սկզբունքները.

- ներգործության միջոցները պետք է համարժեք լինեն ոչ միայն հանցագործության հանգամանքներին ու ծանրությանը, այլև անչափահասի դրությանն ու պահանջներին,
- անչափահասի ազատության սահմանափակման մասին որոշումը պետք է ընդունվի միայն մանրազնին քննարկումից հետո, և այդ սահմանափակումը հնարավորության սահմաններում պետք է հասցնել նվազագույնի,
- անչափահաս իրավախախտին պետք չէ ազատազրկել, եթե միայն նա մեղավոր չի ճանաչվում այլ անձի դեմ բռնությամբ լուրջ հանցագործություններ կատարելու մեջ, ինչպես նաև ներգործության այլ համապատասխան միջոցի բացակայության դեպքում:

ՄԱՍ 2. ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ԳԼՈՒԽ 1. ՀԱՎԱՍԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ - ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§1. ԿԱՆԱՆՑ ԵՎ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

1.1.1. Ի՞նչ ենք հասկանում կանանց և տղամարդկանց իրավահավասարություն ասելով

Կանանց և տղամարդկանց իրավահավասարության սկզբունքը ենթադրում է ոչ միայն տղամարդկանց և կանանց հավասար իրավունքների իրականացում, այլև աշխատող կանանց հատուկ իրավունքների ճանաչում՝ կապված նրանց օրգանիզմի ֆիզոլոգիական առանձնահատկությունների և մոր ու կնոջ այն դերի հետ, որը նա կոչված է իրագործելու ընտանիքում և հասարակության մեջ: Այսպիսով, տղամարդկանց և կանանց միջև հավասար իրավունքների սկզբունքը ներառում է ոչ միայն աշխատանքի, կրթության, սոցիալական, ֆինանսական, քաղաքացիական և այլ հավասար իրավունքները, այլև մայրության հետ կապված հատուկ իրավունքների ճանաչումը և դրանց պաշտպանությունը:

Ընդ որում, կարևոր է, որ այդ իրավունքները ոչ միայն հռչակվեն, այլ դրանց իրականացման համար կոնկրետ միջոցառումներ ձեռնարկվեն:

1.1.2. Ի՞նչ բովանդակություն ունի «կանանց նկատմամբ խտրականություն» հասկացությունը

«Կանանց նկատմամբ խտրականություն» հասկացության բովանդակությունը բացահայտված է Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայում: Համաձայն այդ կոնվենցիայի 1-ին հոդվածի՝ «կանանց նկատմամբ խտրականություն» հասկացությունը նշանակում է սեռի հիմքով ցանկացած տարբերակում, բացառում կամ սահմանափակում, որը նպատակ ունի կանանց համար սահմանափակել կամ վերացնել քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքացիական կամ ցանկացած այլ բնագավառում մարդու իրավունքների և ազատությունների ճանաչումը և կանանց կողմից այդ իրավունքների ու ազատությունների իրականացումը:

1.1.3. Ապահովվա՞ծ է, արդյոք, կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

Թեև ՀՀ Սահմանադրությունը կանանց և տղամարդկանց իրավահավասարության սկզբունքն ուղղակիորեն ամրագրող առանձին

դրույթ չի պարունակում, այնուամենայնիվ, այդ սկզբունքն է արտահայտված Սահմանադրության 15-րդ հոդվածում, որի համաձայն՝ «Քաղաքացիները, անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից ունեն Սահմանադրությամբ եւ օրենքներով սահմանված բոլոր իրավունքները, ազատությունները եւ պարտականությունները»:

Հայաստանի Հանրապետության նորմատիվ դաշտում չկան խտրական նորմատիվ ակտեր, իրավական նորմեր:

§2. ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

1.2.1. Կանանց նկատմամբ խտրականության կանխմանն ուղղված ի՞նչ միջազգային իրավական փաստաթղթեր կան

Կանանց իրավահավասարության իրավական երաշխիքներ ստեղծված են ոչ միայն ներպետական օրենսդրությամբ, այլև կանանց իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերով, որոնց միացել է Հայաստանի Հանրապետությունը: Դրանց թվին են դասվում. Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին 1979թ. կոնվենցիան (Հայաստանի Հանրապետությունը միացել է 07.09.1993թ.), Ամուսնացած կնոջ քաղաքացիության մասին 1957թ. կոնվենցիան (միացել է 16.03.1994թ.), Համարժեք աշխատանքի դիմաց տղամարդկանց եւ կանանց հավասար վարձատրության 1951թ. կոնվենցիան (միացել է 21.12.1993թ.), Աշխատանքի և զբաղվածության բնագավառում խտրականության մասին 1958թ. կոնվենցիան (միացել է 07.09.1993թ.):

1.2.2. Ի՞նչ իրավունքներ են սահմանված Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայով

Կոնվենցիայով մասնակից պետությունները պարտավորվում են կանանց համար, տղամարդկանց հետ հավասար պայմաններով, ապահովել բոլոր ընտրություններում և հանրաքվեներում քվեարկելու, բոլոր ընտրովի պետական մարմիններում ընտրվելու, կառավարման բոլոր մակարդակներով պետական պաշտոններ զբաղեցնելու, հասարակական կազմակերպությունների և միավորումների գործունեությանը մասնակցելու իրավունք:

Կոնվենցիայի մասնակից պետությունները կանանց տրամադրում են տղամարդկանց հետ հավասար իրավունքներ՝ քաղաքացիության ձեռքբերման, փոփոխման կամ պահպանման կապակցությամբ:

Կոնվենցիան նախատեսում է կանանց իրավահավասարություն կրթության բնագավառում, մասնագիտության և զբաղմունքի ընտրության գործում՝ հավասար պայմաններ:

Կոնվենցիան կանանց համար տղամարդկանց հետ հավասար իրավունքներ է նախատեսում ամուսնության ընթացքում և ամուսնալուծվելիս:

1.2.3. Վերահսկողության ի՞նչ մեխանիզմի միջոցով է ապահովվում Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին

Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարումը

Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացմանն է կոչված նույն կոնվենցիայի հիման վրա ստեղծված Կանանց նկատմամբ խտրականության հարցերով կոմիտեն: Վերջինս իր վերահսկողական գործառույթն իրականացնում է հիմնականում Կոնվենցիայի մասնակից պետությունների ներկայացրած ազգային զեկույցների քննության միջոցով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շատ դեպքերում Կոնվենցիայի մասնակից պետությունների ներկայացրած զեկույցներում չի արտացոլվում տվյալ պետությունում Կոնվենցիայի պահանջների կատարման ճշգրիտ պատկերը, Կոմիտեն ազգային զեկույցները քննության առնելիս մեծապես հիմնվում է նաեւ ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացրած տեղեկատվության վրա: Մասնակից պետությունների՝ Կոնվենցիայի պահանջների կատարմանն ուղղված միջոցառումների եւ Կոնվենցիայի դրույթների կատարման վիճակի մասին ներկայացված զեկույցների քննության արդյունքում Կոմիտեն ընդունում է համապատասխան առաջարկություններ եւ հանձնարարականներ՝ նշելով այն կոնկրետ միջոցառումները, որոնք պետք է իրականացվեն Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով:

1.2.4. Կարո՞ղ են, արդյոք, կանայք իրենց իրավունքների պաշտպանությունն իրականացնել միջազգային կառույցների միջոցով

Կանանց նկատմամբ խտրականության հարցերով կոմիտեն իրավասու չէ ընդունելու և քննության առնելու կնոջ իրավունքների ոտնահարման առանձին դեպքերի վերաբերյալ գանգատներ: Սակայն, ներկայումս ելնելով Կոնվենցիայի կատարման ապահովմանն ուղղված ընթացակարգերի կատարելագործման անհրաժեշտությունից՝ օրակարգում է Կոնվենցիայի արձանագրության ընդունման հարցը, որով նախատեսվում է Կոմիտեին օժտել առանձին անձանցից՝ կոնվենցիայով սահմանված իրենց իրավունքների խախտման վերաբերյալ գանգատներ ստանալու եւ քննության առնելու իրավասությամբ:

℘3. ԿՆՈՋ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆ՝ ԸՍՏ ԱՄՈՒՍՆԱՑԱԾ ԿՆՈՋ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ

1.3.1. Ի՞նչ ազդեցություն է ունենում կնոջ քաղաքացիության վրա ամուսնու քաղաքացիության փոփոխությունը

Ամուսնացած կնոջ քաղաքացիության մասին 1957թ. հունվարի 29-ի կոնվենցիայի համաձայն՝ ամուսնու քաղաքացիության կորուստը կամ այլ պետության քաղաքացիության ձեռքբերումը չի կարող ինքնին հանգեցնել կնոջ քաղաքացիության կորստի կամ փոփոխության: Կոնվենցիայի այս պահանջին համապատասխան՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքը նախատեսում է, որ ամուսիններից մեկի քաղաքացիության փոփոխվելն ինքնին չի հանգեցնում մյուս ամուսնու քաղաքացիության փոփոխության:

1.3.2. Ի՞նչ ազդեցություն է ունենում Հ այաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող կնոջ քաղաքացիության վրա օտարերկրացու հետ նրա ամուսնությունը

Համաձայն Ամուսնացած կնոջ քաղաքացիության մասին կոնվենցիայի և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող կնոջ ամուսնությունը օտարերկրացու հետ ինքնին չի հանգեցնում նրա քաղաքացիության փոփոխման: Օտարերկրացու հետ ամուսնացած՝ ՀՀ քաղաքացի հանդիսացող կինը պահպանում է իր քաղաքացիությունը, քանի դեռ ցանկություն չի հայտնել ձեռք բերել ամուսնու քաղաքացիությունը:

1.3.3. Ի՞նչ կարգով է ՀՀ քաղաքացիություն տրվում ՀՀ քաղաքացու հետ ամուսնացած կնոջը

Ամուսնացած կնոջ քաղաքացիության մասին կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ կոնվենցիայի մասնակից պետությունը պարտավոր է իր քաղաքացու հետ ամուսնացած օտարերկրացի կնոջ համար սահմանել իր ամուսնու քաղաքացիությունն ստանալու արտոնյալ ընթացակարգ: Կոնվենցիայի այս պահանջին համահունչ է «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքը:

«ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով սահմանված են ՀՀ քաղաքացիություն ստանալու պայմանները: Դրանք են.

- վերջին երեք տարում Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակությունը,
- հայերեն լեզվով բացատրվելու կարողությունը,
- ծանոթությունը ՀՀ Սահմանադրությանը:

Օրենքը սահմանում է այն անձանց խմբերը, որոնք ՀՀ քաղաքացիություն են ձեռք բերում առանց Հայաստանի Հանրապետությունում բնակության եռամյա ժամկետի պահպանման: Նշված անձանց խմբին պատկանում է այն անձը, որն ամուսնացել է ՀՀ քաղաքացու հետ: Սա նշանակում է, որ

Հայաստանի Հանրապետության քաղաքացու հետ ամուսնացած կնոջ համար գործում է ՀՀ քաղաքացիություն ստանալու արտոնյալ կարգ, և ՀՀ քաղաքացու հետ ամուսնացած կնոջ ցանկությունը բավարար հիմք է նրան ամուսնու քաղաքացիությունը տրամադրելու համար:

ԳԼՈՒԽ 2. ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՐԳԵԼՈՒՄԸ

2.1.1. Ի՞նչ աշխատանքներում է արգելվում կանանց աշխատանքի օգտագործումը

ՀՀ աշխատանքային օրենսգիրքն արգելում է կանանց աշխատանքի կիրառումը ծանր կամ վնասակար պայմաններ ունեցող, ինչպես նաև ստորերկրյա աշխատանքներում. կանանց ներգրավումը թույլատրելի է միայն որոշ ստորերկրյա աշխատանքներում, մասնավորապես, ոչֆիզիկական կամ սանիտարական ու կենցաղային սպասարկման աշխատանքներում:

Օրենքն արգելում է նաև սահմանված նորմաները գերազանցող ծանրությունների փոխադրումն ու տեղաշարժումը կանանց կողմից:

2.1.2. Թույլատրվու՞մ է, արդյոք, կանանց ներգրավումը գիշերային աշխատանքում

Գիշերային աշխատանքում, որպես կանոն, չի թույլատրվում կանանց աշխատանքի ներգրավումը: Բացառություն են կազմում ժողովրդական տնտեսության այն ճյուղերը, որտեղ գիշերային աշխատանքում կնոջ ներգրավումը բխում է հատուկ անհրաժեշտությունից և թույլատրվում է որպես ժամանակավոր միջոցառում:

Համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 52-րդ հոդվածի, ընդհանրապես արգելվում է գիշերային աշխատանքում ներգրավել հղի կանանց և մինչև երկու տարեկան երեխա ունեցող կանանց:

2.1.3. Ի՞նչ սահմանափակումներ են նախատեսված փոքրահասակ երեխաներ ունեցող կանանց արտաժամյա աշխատանքի և հանգստյան օրերին նրանց աշխատանքի համար

Չի թույլատրվում հղի կանանց և մինչև երկու տարեկան երեխա ունեցող կանանց ներգրավել արտաժամյա, ինչպես նաև հանգստյան օրերին կատարվող աշխատանքների (ՀՀ աշխատանքային օրենսգիրք, 186-րդ հոդված):

§2. ՀՂԻ ԿԱՆԱՆՑ ԵՎ ՓՈՔՐԱՀԱՍԱԿ ԵՐԵԽԱՆԵՐ ԽՆԱՄՈՂ ԿԱՆԱՆՑ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

2.2.1. Ի՞նչ երաշխիքներ են սահմանված հղի կանանց և փոքրահասակ երեխաներ ունեցող կանանց աշխատանքի ընդունելիս և աշխատանքից արձակելիս

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 197-րդ հոդվածով արգելվում է կանանց աշխատանքի չընդունել կամ նրանց աշխատավարձն իջեցնել հղիության կամ երեխային կերակրելու հետ կապված պատճառներով:

Օրենքը երաշխիքներ է նախատեսում նաև նշված կատեգորիայի կանանց աշխատանքից արձակելու դեպքում: Ընդհանուր կանոնի համաձայն՝ հղի կանանց կամ մինչև մեկուկես տարեկան երեխա խնամող կնոջը չի թույլատրվում աշխատանքից արձակել ադմինիստրացիայի նախաձեռնությամբ: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ աշխատանքից արձակումը կատարվում է ձեռնարկության, հիմնարկի, կազմակերպության լրիվ լուծարման հետևանքով: Ընդ որում, այս դեպքում էլ արձակումը թույլատրվում է միայն աշխատանքի տեղավորելու պայմանով: Ադմինիստրացիան պարտավոր է հղի կնոջը կամ մինչև մեկուկես տարեկան երեխա ունեցող կնոջը պարտադիր կերպով աշխատանքի տեղավորել նաև այն դեպքում, երբ տվյալ կնոջ աշխատանքից արձակումը տեղի է ունենում ժամկետային աշխատանքային պայմանագիրն ավարտվելու հետևանքով:

2.2.2. Կարո՞ղ են, արդյոք, հղի կանայք և փոքրահասակ երեխա խնամող կանայք պահանջել ավելի թեթև աշխատանքի փոխադրում

Համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 188-րդ հոդվածի, հղի կինը, ինչպես նաև մինչև մեկուկես տարեկան երեխա ունեցող կինը իրավունք ունի պահանջելու, որպեսզի իրեն փոխադրեն այլ՝ ավելի թեթև և արտադրական անբարենպաստ գործոնների ազդեցությունը բացառող աշխատանքի:

Օրենքը նախատեսում է, որ հղի կնոջը կամ մինչև մեկուկես տարեկան երեխա ունեցող կնոջն այլ՝ ավելի թեթև աշխատանքի փոխադրելիս կամ արտադրանքի նորմաները իջեցնելիս՝ պահպանվում է նախկին աշխատանքում ունեցած միջին վաստակը:

2.2.3. Կարո՞ղ է, արդյոք, հղի կինը կամ փոքրահասակ երեխա ունեցող կինն օգտվել ոչ լրիվ աշխատաժամանակի իրավունքից

Հղի կնոջ, ինչպես նաև մինչև ութ տարեկան երեխա ունեցող կնոջ խնդրանքով ադմինիստրացիան պարտավոր է նրա համար սահմանել ոչ լրիվ աշխատանքային օր կամ աշխատանքային շաբաթ: Այս դեպքում աշխատանքի վարձատրությունը կատարվում է աշխատած ժամանակի

համեմատ կամ ըստ արտադրանքի: Ընդ որում, ոչ լրիվ աշխատաժամանակով աշխատելը որևէ կերպ չի անդրադառնում արձակուրդի տևողության կամ աշխատանքային ստաժի հաշվարկման վրա:

2.2.4. Որքա՞ն է հղիության և ծննդաբերության արձակուրդի տևողությունը

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին 1966թ. դաշնագիրը մասնակից պետություններին պարտավորեցնում է հատուկ պաշտպանություն տրամադրել հղի կանանց՝ մինչև ծննդաբերությունը և դրանից հետո ընկած ողջամիտ ժամանակաշրջանի ընթացքում: Դաշնագրի պահանջն է այդ ժամանակաշրջանի ընթացքում աշխատող մայրերին տրամադրել վճարովի արձակուրդ կամ արձակուրդ՝ սոցիալական ապահովության բավարար նպաստներով:

Համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի, կանանց տրվում են հղիության և ծննդաբերության արձակուրդներ՝ աշխատավարձի պահպանմամբ՝ 140 օրացուցային օր տևողությամբ, որից 70 օրը՝ նախածննդյան շրջանի և 70 օրը՝ հետծննդյան շրջանի համար: Բարդ ծննդաբերության դեպքում հղիության և ծննդաբերության արձակուրդների տևողությունը 155 օր է, իսկ զույգ և ավելի երեխաների ծնվելու դեպքում՝ 180 օր:

Հղիության և ծննդաբերության արձակուրդից առաջ կամ դրանից անմիջապես հետո կնոջը, իր դիմումի հիման վրա, տրվում է տարեկան արձակուրդ՝ անկախ տվյալ ձեռնարկությունում, հիմնարկում կամ կազմակերպությունում նրա ունեցած ստաժից: Օրինակ, կինը տվյալ ձեռնարկությունում աշխատանքի է ընդունվել հունվար ամսին, իսկ հունիսի 1-ից նրան տրվում է հղիության և հետծննդաբերության արձակուրդ: Եթե կինը խնդրում է ապրիլի 1-ից իրեն տրամադրել իր տարեկան հերթական արձակուրդը, ապա ադմինիստրացիան պարտավոր է նրան տրամադրել լրիվ վճարովի արձակուրդ՝ չնայած, որ տվյալ կինը՝ որպես նոր ընդունված աշխատող, դեռևս չի աշխատել օրենքով սահմանված՝ տարեկան վճարովի արձակուրդ տրամադրելու համար անհրաժեշտ տասնմեկամսյա ժամկետը:

Բացի հղիության և ծննդաբերության արձակուրդներից (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 189-րդ հոդված), աշխատող մորը՝ մինչև երեխայի 2 տարեկան դառնալը նրա խնամքի համար տրամադրվում է նաև մասնակի վճարովի արձակուրդ:

2.2.5. Պարտավո՞ր է, արդյոք, ադմինիստրացիան փոքրահասակ երեխա խնամող կնոջը տրամադրել լրացուցիչ արձակուրդ

Բացի հղիության և ծննդաբերության արձակուրդներից, ինչպես նաև մինչև երեխայի 2 տարեկան դառանալը նրա խնամքի համար կնոջը տրամադրվող մասնակի վճարովի արձակուրդից, նրա դիմումի հիման վրա, մինչև երեխայի 3 տարեկան դառնալը նրա խնամքի համար տրվում է լրացուցիչ արձակուրդ՝ առանց աշխատավարձի պահպանման: Ընդ որում, առանց աշխատավարձի պահպանման լրացուցիչ արձակուրդը հաշվվում է աշխատանքի ընդհանուր և անընդհատ ստաժի, ինչպես նաև մասնագիտական աշխատանքի ստաժում:

2.2.6. Նորածին երեխա որդեգրած կանանց տրամադրվու՞մ է, արդյոք, երեխայի խնամքի համար արձակուրդ

Որդեգրման օրից մինչև հիսունվեց օրը լրանալն արձակուրդ է տրամադրվում անմիջականորեն ծննդատնից նորածին երեխաներ որդեգրած կանանց: Նրանց ցանկությամբ, առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ ունենալու դեպքում, մինչև երեխայի մեկ տարեկան դառնալը նրա խնամքի համար տրամադրվում է մասնակիորեն վճարովի արձակուրդ: Ծննդատնից անմիջականորեն երեխա որդեգրած կնոջը, իր դիմումի հիման վրա, մինչև երեխայի մեկուկես տարեկան դառնալը նրա խնամքի համար տրվում է նաև լրացուցիչ արձակուրդ՝ առանց աշխատավարձի պահպանման (ՀՀ աշխատանքային օրենսգիրք, 193-րդ հոդված):

ԳԼՈՒԽ 3. ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

§1. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ

3.1.1. Ո՞րն է կանանց և տղամարդկանց տարիքային աշխատանքային կենսաթոշակային տարիքը

Տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք ունեն.

- հիմնարկներում, ձեռնարկություններում, կազմակերպություններում աշխատանքային պայմանագրի հիման վրա աշխատող անձինք,
- ինքնուրույն աշխատանքով զբաղված անձինք, այդ թվում՝ անհատ ձեռներեցները և գյուղացիական տնտեսությամբ զբաղվողները,
- գիտական և ստեղծագործական աշխատանքով զբաղված անձինք,
- քաղաքացիական պարտքը կատարելիս հաշմանդամ դարձած անձինք:

Տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք ունեն կանայք՝ 63, տղամարդիկ՝ 65 տարին լրանալու և ոչ պակաս 5 տարվա աշխատանքային ստաժի առկայության դեպքում: (Կանանց և տղամարդկանց տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակելու համար ըստ տարիների սահմանված տարիքային սանդղակը տես հավելված 1-ում):

Տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք չունեցող անձանց նշանակվում է ծերության կենսաթոշակ՝ կանանց՝ 63, տղամարդկանց՝ 65 տարին լրանալու դեպքում: (Կանանց և տղամարդկանց ծերության կենսաթոշակ նշանակելու համար ըստ տարիների սահմանված տարիքային սանդղակը տես հավելված 2-ում):

3.1.2. Ու՞մ կարող է տրամադրվել արտոնյալ պայմաններով տարիքային աշխատանքային կենսաթոշակ

Արտոնյալ պայմաններով տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք ունեն.

- առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում առնվազն 15 տարի աշխատած կանայք՝ 53, տղամարդիկ՝ 58 տարին լրանալու դեպքում,

- վնասակար, ծանր պայմաններում առնվազն 20 տարի աշխատած կանայք՝ 55, տղամարդիկ՝ 60 տարին լրանալու դեպքում: (Կանանց և տղամարդկանց արտոնյալ պայմաններով տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակելու համար ըստ տարիների սահմանված տարիքային սանդղակը տես հավելված 3-ում):

ՀՀ Գերագույն խորհրդի 1993թ. մարտի 31-ի որոշմամբ սահմանված է այն արտադրությունների, աշխատանքների, մասնագիտությունների, պաշտոնների և ստորգետնյա խիստ վտանգավոր ու ծանր պայմաններում կատարվող աշխատանքների ցուցակը, որը տալիս է արտոնյալ պայմաններով տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք (օրինակ՝ հանքային աշխատանքներ, մետաղագործական, քիմիական արտադրության ոլորտի աշխատանքներ, նավթի, գազի, ածխի վերամշակման հետ կապված աշխատանքներ, էլեկտրոնային տեխնիկայի իրերի և ռադիոսարքերի, շինարարական նյութերի, արհեստական և սինթետիկ թելերի, դեղամիջոցների, բժշկական և կենսաբանական պատրաստուկների արտադրության ոլորտի աշխատանքներ):

ՀՀ Կառավարության 1993թ. սեպտեմբերի 27-ի որոշմամբ հաստատված է տեքստիլ այն արտադրությունների, արտադրամասերի, ինչպես նաև համապատասխան մասնագիտությունների աշխատատեղերի ու պաշտոնների ցանկը, որոնցում հաստոցների և մեքենաների վրա բանվորուհիների կատարած աշխատանքը տալիս է տարիքային արտոնյալ աշխատանքային կենսաթոշակի իրավունք:

3.1.3. Օրենսդրությունը նախատեսու՞մ է, արդյոք, տարիքային աշխատանքային կենսաթոշակի նշանակման հատուկ կանոններ բազմազավակ մայրերի և հաշմանդամ երեխաներ ունեցող մայրերի համար

Համաձայն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի, չորս և ավելի երեխա ծնած և նրանց մինչև ութ տարեկանը խնամած մայրերը, ինչպես նաև մինչև 16 տարին լրանալը մանկուց հաշմանդամ ճանաչված երեխա խնամած մայրերը՝ 58 տարին լրանալու և առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժ ունենալու դեպքում ունեն արտոնյալ պայմաններով տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք:

3.1.4. Ո՞ր դեպքերում է նշանակվում երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակ

Համաձայն «Երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակներ նշանակելու պայմանների մասին» ՀՀ օրենքի, երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակի իրավունք ունեն կրթության, մշակույթի, քաղաքացիական ավիացիայի, սպորտի բնագավառներում տվյալ օրենքով սահմանված առանձին մասնագիտություններով աշխատող անձինք: (Երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց ցանկը տես հավելված 4-ում):

Օրենքը տղամարդկանց և կանանց համար սահմանում է

աշխատանքային գործունեության նշված բնագավառներում երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակներ նշանակելու տարբեր պայմաններ: Այդ պայմանները վերաբերում են մասնագիտական աշխատանքային ստաժի տևողությանը և տարիքին: Մասնավորապես, կրթության և մշակույթի բնագավառների աշխատողներին երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է 50 տարին լրացած և 25 տարվա աշխատանքային ստաժ ունեցող կանանց, 55 տարին լրացած և 30 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունեցող տղամարդկանց: Նմանապես տարիքային և մասնագիտական աշխատանքային ստաժի տևողության տարբեր պահանջներ են ներկայացվում քաղաքացիական ավիացիայի առանձին կատեգորիաների աշխատողներին, թատերական կազմակերպությունների առանձին կատեգորիայի դերասաններին, ինչպես նաև առանձին կատեգորիայի մարզիկներին երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակներ նշանակելուն:

3.1.5. Ի՞նչ կարգով են հաշվարկվում կենսաթոշակները

Կենսաթոշակները հաշվարկվում են բազային կենսաթոշակին ավելացնելով յուրաքանչյուր մեկ լրիվ տարվա աշխատանքային ստաժի համար տրվող հավելումը: Աշխատանքային ստաժի յուրաքանչյուր տարվա համար հավելումը հաշվարկելիս՝ մինչև 6 ամիս աշխատանքային ստաժի տևողությունը չի հաշվառվում, իսկ 6 ամսից ավելիի դեպքում՝ հաշվառվում է 1 տարի:

3.1.6. Կենսաթոշակ նշանակելիս կնոջ ընդհանուր աշխատանքային ստաժում հաշվառվու՞մ է, արդյոք, հաշմանդամ կամ փոքրահասակ երեխայի խնամքի ժամանակահատվածը

Կենսաթոշակ նշանակելիս կնոջ աշխատանքային ընդհանուր ստաժում հաշվառվում են ինչպես մինչև 16 տարեկան մանկուց հաշմանդամ երեխային խնամելու, այնպես էլ չաշխատող մոր կողմից՝ յուրաքանչյուր երեխային մինչև 3 տարին լրանալը խնամելու ժամանակաշրջանը: Սակայն աշխատանքային ստաժում հաշվառվող՝ մինչև 16 տարեկան մանկուց հաշմանդամ երեխայի խնամքի ժամանակաշրջանը չի կարող գերազանցել 10 տարին: Մինչև 3 տարեկան երեխաների խնամքի ընդհանուր ժամանակաշրջանը՝ անկախ երեխաների թվից, չի կարող գերազանցել 9 տարին:

§2. ԵՐԵԽԱՅԻ ԽՆԱՄՔԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԿԱՆԱՆՑ ՏՐՎՈՂ ՆՊԱՍՏՆԵՐ

3.2.1. Ի՞նչ նպաստներ են տրվում կանանց երեխայի ծննդյան և երեխայի խնամքի կապակցությամբ

Պետական ամենամսյա նպաստ նշանակվում և վճարվում է մինչև երկու տարեկան երեխա խնամող՝ մասնակի վճարովի արձակուրդում գտնվող կանանց: Երեխայի ծննդյան կապակցությամբ վճարվում է միանվագ նպաստ: Համաձայն ՀՀ կառավարության «Մինչև 2 տարեկան երեխա խնամող՝ մասնակի վճարովի արձակուրդում գտնվող անձանց, երեխայի

ծննդյան կապակցությամբ տրվող միանվագ և գործազրկության բազային նպաստների չափերը սահմանելու մասին» 19.04.1999թ. թիվ 235 որոշման՝ երեխայի ծննդյան կապակցությամբ տրվող միանվագ նպաստի չափը 5900 դրամ է, իսկ մինչև երկու տարեկան երեխա խնամող անձանց տրվող նպաստի չափը՝ 2300 դրամ է:

3.2.2. Արդյո՞ք միայն աշխատող կանայք ունեն երեխայի խնամքի համար նպաստ ստանալու իրավունք

Մինչև երկու տարեկան երեխա խնամելու համար նպաստ ստանալու իրավունք ունեն միայն աշխատող կանայք: Գործազուրկ մայրերն այդ իրավունքից չեն օգտվում:

ԳԼՈՒԽ 4. ԿԻՆԸ ԵՎ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ

§1. ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

4.1.1. Ի՞նչ է կնոջ նկատմամբ բռնությունը

ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի ընդունած՝ Կանանց նկատմամբ բռնությունն արմատապես վերացնելու մասին հռչակագրում տրված է կնոջ նկատմամբ բռնության հետևյալ սահմանումը. « Կանանց նկատմամբ բռնություն» հասկացությունը նշանակում է սեռական հատկանիշով կատարվող ցանկացած գործողություն, որը կանանց ֆիզիկական, սեռական կամ հոգեկան տառապանք կամ վնաս է պատճառում, կամ կարող է պատճառել, ինչպես նաև այդպիսի գործողությունների սպառնալիքներ, հարկադրանք կամ կամայական զրկում ազատությունից, լինի դա հասարակական, թե անձնական կյանքում»:
Համաձայն նշյալ միջազգային փաստաթղթի՝ կանանց նկատմամբ բռնությունն ընդգրկում է.
- ֆիզիկական, սեռական և հոգեբանական այն բռնությունը, որը կատարվում է ընտանիքում,
- ֆիզիկական, սեռական և հոգեբանական այն բռնությունը, որը կատարվում է ընդհանրապես հասարակության մեջ,
- ֆիզիկական, սեռական և հոգեբանական բռնությունը պետության կողմից կամ նրա թողտվությամբ՝ որտեղ էլ որ այն կատարվի:

4.1.2. Ի՞նչ է նշանակում ընտանեկան բռնություն

Ընտանեկան բռնության սահմանումը տրված է Ընտանիքում կատարվող բռնության մասին Միավորված ազգերի կազմակերպության մոդելային օրենսդրության մեջ: Վերջինս ընտանիքում կնոջ նկատմամբ բռնությունը բնորոշում է որպես՝ « Կանանց նկատմամբ ֆիզիկական, հոգեբանական և սեռական բնույթի բռնության բոլոր գործողությունները՝ կատարված նրանց հետ ընտանեկան և մոտ հարաբերություններով կապված անձի կողմից՝ սեռական հատկանիշի հիման վրա»:

4.1.3. Որտե՞ղ կարող են պաշտպանություն գտնել ընտանիքում բռնության ենթարկված կանայք

Ներկայումս ընտանեկան բռնության ենթարկված կանանց իրենց անմիջական աջակցությունն են ցուցաբերում կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունները: Նրանց կողմից ցուցաբերվող աջակցության ձևերը հիմնականում հետևյալն են.

- «Վստահության հեռախոսակապի հատուկ ծառայություն», որը տրամադրում է իրավաբանական և հոգեբանական անվճար խորհրդատվություն: Վստահության հեռախոսակապի ծառայության աշխատանքի հիմնական սկզբունքը հեռախոսազանգերի անանունությունը և խորհրդապահությունն է: Այս ծառայության կարևորությունը կայանում է նրանում, որ այն հնարավորություն է տալիս սեղմ ժամկետում աջակցություն տրամադրել մեծ թվով կանանց: Բացի դրանից, խորհրդապահության ու անանունության սկզբունքը կանանց օգնում է հաղթահարել իրենց հուզող հարցի մասին բարձրաձայն խոսելուց խուսափելու հոգեբանական արգելքը:

Մի քանի հասարակական կազմակերպությունների կողմից վստահության հեռախոսակապի հատուկ ծառայություններ են ստեղծվել Հայաստանի Հանրապետության տարբեր քաղաքներում: 2000թ. առաջին երեք ամսվա ընթացքում Գյումրիում 24-ժամյա «թեժ գիծը» կանանցից ստացել է 216 ահազանգ, որոնց 50 % -ը վերաբերում էր ընտանեկան բռնությանը: Երևանում գործող նմանատիպ ծառայությունը 1999թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին գրանցել է 97 զանգ, որոնցից 39-ը վերաբերում էր ընտանիքում կնոջ նկատմամբ բռնությանը: Թերևս նշված տվյալները պատկերացում են տալիս ինչպես հիմնախնդրի առկայության, այնպես էլ նման ծառայության անհրաժեշտության և կարևորության մասին:

- Անհատական հանդիպումներ բռնության ենթարկված կանանց հետ: Կանայք կարող են անմիջական հանդիպումներ ունենալ խորհրդատուների, հոգեբանների և իրավաբանների հետ:

Բռնության ենթարկված կանանց գործուն և արդյունավետ աջակցության հաստատություններ են «Ճգնաժամային կենտրոնները»: Վերջիններիս նպատակը ոչ միայն հոգեբանական և իրավաբանական օգնություն ցույց տալն է, այլ նաև ֆիզիկական ու հոգեկան առողջության համար վտանգավոր վիճակում գտնվող կանանց սոցիալական օգնության ցուցաբերումը: Սոցիալական օգնությունը դրսևորվում է կենտրոնի հաճախորդներին միանվագ կամ մշտական բնույթ կրող անհրաժեշտ սոցիալական ծառայություններ մատուցելու, պաշտպանության կարիք ունեցող կանանց ժամանակավոր ապաստան տրամադրելու միջոցով: Ընդ որում, նման հաստատությունները ֆինանսավորվում են պետության կողմից:

Ճգնաժամային կենտրոնները բավականին տարածված են Արևմտյան Եվրոպայի երկրներում. նման հաստատություններ շուրջ քառորդ դար է, ինչ գործում են Անգլիայում, Շվեյցարիայում դրանց թիվը հասնում է 100-ի, Գերմանիայում՝ 300-ի: 1993 թվականից ճգնաժամային կենտրոններ գործում են նաև Ռուսաստանի Դաշնությունում: Հայաստանի Հանրապետությունում նման կենտրոնների ստեղծման փորձեր են կատարվում ոչպետական կառույցների կողմից, որը, սակայն, բավականին

մեծ նյութական ռեսուրսներ է պահանջում:

4.1.4 Ի՞նչ անել սեփական անվտանգությունն ապահովելու համար

Եթե բռնության եք ենթարկվում, մի հապաղեք դիմել օգնության: **Դիմե՛ք** ոստիկանություն: Հետևեք և պահանջեք, որ ձեր դիմումը գրանցվի և դրան ընթացք տրվի: Պահանջեք, որ նշանակվի դատաբժշկական փորձաքննություն: Ոստկանության օգնությանը դիմելը բռնության ենթարկված կնոջ անվտանգության ապահովման առավել գործուն և արդյունավետ միջոց է: Ոստիկանությունը կարող է և պարտավոր է պաշտպանել առկա վտանգից և բռնության ենթարկված կնոջն օգնել առանց խոչընդոտների լքելու բռնության վայրը:

Դիմե՛ք դատախազություն, եթե ձեր բողոքին ոստիկանության կողմից ընթացք չի տրվում:

Դիմե՛ք վստահության հեռախոսակապի հատուկ ծառայությունների, որտեղ ձեզ կլսեն և կտրամադրեն իրավաբանական և հոգեբանական խորհրդատվություն:

Եթե դուք երբևէ ենթարկվել եք բռնության, եթե գտնվում եք հոգեկան ծանր վիճակում, դիմեք «Թեժ գիծ» վստահության հեռախոսային ծառայությանը՝ հետևյալ հեռախոսահամարով.
54 28 28: Այս ծառայությունը ձեզ կտրամադրի անհրաժեշտ իրավաբանական և հոգեբանական խորհրդատվություն: Ծառայությունը ստեղծվել է Կանանց իրավունքների կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից:

4.1.5. Պետական մակարդակով ի՞նչ միջոցներ են ձեռնարկվում կանանց նկատմամբ բռնությունը կանխելու նպատակով

ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման ծրագրի հիմնադրույթների մասին» 1998թ. ապրիլի 15-ի թիվ 242 որոշմամբ առանձին միջոցառումների շարք է նախատեսված կանանց նկատմամբ ամեն տեսակի բռնություն կանխելու նպատակով: Մասնավորապես նախատեսվում է.

- կանոնակարգել կանանց նկատմամբ կատարված հանցագործությունների վերաբերյալ պետական վիճակագրությունը՝ կանանց նկատմամբ դրսևորվող բռնության բոլոր ձևերի մասին ամբողջական և օբյեկտիվ տեղեկություն ստանալու համար,
- զարգացնել բռնության ենթարկված և կենսական ծայրահեղ վիճակում գտնվող կանանց սոցիալական օգնություն ցույց տալու մասնագիտական հաստատությունների ցանցը,
- մշակել ազգամիջյան բախումներից տուժած, փախստական և բռնագաղթած կանանց սոցիալական վերականգնման համալիր ծրագիր,
- կատարելագործել հանցագործություններից տուժած, այդ թվում՝ բռնության ենթարկված կանանց պաշտպանությունն ապահովող համապատասխան օրենսդրությունը:

4.2.1. Կնոջն ազատազրկման ձևով պատիժ նշանակելիս ինչպե՞ս է որոշվում ուղղիչ հիմնարկի տեսակը

Համաձայն ՀՀ ուղղիչ աշխատանքային օրենսգրքի՝ կանայք պատիժը կրում են ընդհանուր ռեժիմի ուղղիչ գաղութներում, բացառությամբ առանձնապես վտանգավոր ռեցեդիվիստ ճանաչված կանանց և այն կանանց, որոնց նկատմամբ նշանակված մահապատիժը ներման կամ համաներման կարգով փոխարինվել է ազատազրկմամբ: Վերջիններս պատիժը կրում են խիստ ռեժիմի ուղղիչ գաղութներում:

4.2.2. Ինչպե՞ս է կազմակերպվում ազատազրկման վայրերում գտնվող կնոջ երեխայի խնամքը

Այն ուղղիչ հիմնարկներին կից, որտեղ պատիժ են կրում կանայք, անհրաժեշտության դեպքում, կազմակերպվում են մանկատներ: Դատապարտյալ կանայք կարող են մինչև 2 տարեկան երեխաներին տեղավորել այդ մանկատներում: Ազատազրկման վայրում գտնվող կանանց 2 տարին լրացած երեխաներն ուղարկվում են համապատասխան մանկական հիմնարկներ կամ հանձնվում են դատապարտյալ կնոջ հարազատների կամ այլ անձանց խնամքին:

4.2.3. Պատժի համակարգի ի՞նչ առանձնահատկություններ է օրենսդրությունը նախատեսում կանանց համար

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 35-րդ հոդվածի, ի թիվս պատասխանատվությունը մեղմացնող այլ հանգամանքների, պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք է համարվում նաև հանցագործությունը հղի վիճակում կատարած լինելը:

Քրեական օրենսգիրքն արգելում է հանցագործությունը կատարելու ժամանակ կամ դատավճիռն արձակելու պահին հղի վիճակում գտնվող կանանց մահապատժի դատապարտումը: Մահապատիժ չի կարող կիրառվել նաև դատավճռի կատարման պահին հղի վիճակում գտնվող կնոջ նկատմամբ:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Կանանց և տղամարդկանց տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակելու համար ըստ տարիների սահմանված տարիքային սանդղակ

Քաղվածք «Պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքից

Տարեթիվ	Տղամարդ	Կին
1996թ.	60.5	55.5
1997թ.	61	56
1998թ.	61.5	56.5
1999թ.	62	57
2000թ.	62.5	57.5
2001թ.	63	58
2002թ.	63.5	58.5
2003թ.	64	59
2004թ.	64.5	59.5
2005թ.	65	60
2006թ.	65	60.5
2007թ.	65	61
2008թ.	65	61.5
2009թ.	65	62
2010թ.	65	62.5
սկսած 2011թ.-ից	65	63

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Կանանց և տղամարդկանց ծերության կենսաթոշակ նշանակելու համար ըստ տարիների սահմանված տարիքային սանդղակ

Քաղվածք «Պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքից

Տարեթիվ	Տղամարդ	Կին
1996թ.	65	60.5
1997թ.	65	61
1998թ.	65	61.5
1999թ.	65	62
2000թ.	65	62.5
սկսած 2001թ.-ից	65	63

ՀԱՎԵԼՎԱԾ 3

Կանանց և տղամարդկանց արտոնյալ պայմաններով տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակելու համար ըստ տարիների սահմանված տարիքային սանդղակ

ա/ առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում աշխատած կանանց և տղամարդկանց արտոնյալ պայմաններով տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակելու համար ըստ տարիների սահմանված տարիքային սանդղակ

Տարեթիվ	Տղամարդ	Կին
1996թ.	50.5	45.5
1997թ.	51	46
1998թ.	51.5	46.5
1999թ.	52	47
2000թ.	52.5	47.5
2001թ.	53	48
2002թ.	53.5	48.5
2003թ.	54	49
2004թ.	54.5	49.5
2005թ.	55	50
2006թ.	55.5	50.5
2007թ.	56	51
2008թ.	56.5	51.5
2009թ.	57	52
2010թ.	57.5	52.5
սկսած 2011թ.-ից	58	53

բ/ վնասակար, ծանր պայմաններում աշխատած կանանց և տղամարդկանց արտոնյալ պայմաններով տարիքային աշխատանքային

կենսաթոշակ նշանակելու համար ըստ տարիների սահմանված տարիքային սանդղակ

Տարեթիվ	Տղամարդ	Կին
1996թ.	55.5	50.5
1997թ.	56	51
1998թ.	56.5	51.5
1999թ.	57	52
2000թ.	57.5	52.5
2001թ.	58	53
2002թ.	58.5	53.5
2003թ.	59	54
2004թ.	59.5	54.5
սկսած 2005թ.-ից	60	55

ՀԱՎԵԼՎԱԾ 4

Քաղվածք «Երկարամյա ծառայության
աշխատանքային կենսաթոշակներ
նշանակելու պայմանների մասին»
1996թ. մարտի 5-ի ՀՀ օրենքից

Հոդված 1. Երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային գործունեության բնագավառները

Սույն օրենքը սահմանում է կրթության, մշակույթի, քաղաքացիական ավիացիայի, սպորտի բնագավառներում առանձին մասնագիտություններով աշխատող անձանց երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակների նշանակման պայմանները:

Հոդված 2. Կրթության, մշակույթի բնագավառների առանձին աշխատողների երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակներ նշանակելու պայմանները

Կրթության, մշակույթի բնագավառների աշխատողների երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակներ նշանակվում են՝ 50 տարին լրացած և 25 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունեցող այն կանանց, 55 տարին լրացած և 30 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունեցող այն տղամարդկանց, ովքեր զբաղվել են աշխատանքային գործունեության հետևյալ տեսակներով՝

ա) միջնակարգ հանրակրթական դպրոցների, գիմնազիաների, բոլոր անվանումների գիշերօթիկ դպրոցների և դպրոց-գիշերօթիկների, խուլ-համրերի, կույրերի, նյարդային և այլ հիվանդ երեխաների համար նախատեսված բոլոր տիպի դպրոցների, առողջարանային դպրոցների, մանկական առողջարաններին կից դպրոցների և ուսումնական խմբերի, երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների, երաժշտական դպրոց-յոթնամյակների, երաժիշտ սաների դպրոցների, զինվորական միջնակարգ մասնագիտական դպրոցների և ուսումնարանների տնօրենները, ուսուցիչները, ուսուցիչ-լոգոպեդները, դասատուները, խուլ-համրերի մանկավարժները /սուրդոմանկավարժները/, կույրերի մանկավարժները /տիֆլոմանկավարժներ/, մանկավարժ-դաստիարակները, դաստիարակ-ղեկավարները /դաստիարակներ/, ավագ ջոկատավարները, ջոկատավարները, լսողական կաբինետների վարիչները և հրահանգիչները, վարիչները և ուսումնադաստիարակչական, ուսումնաարտադրական մասի կամ արտադրական ուսուցման գծով տեղակալները, ուսումնական և ուսումնադաստիարակչական մասի վարիչները, հանրակրթության համակարգի մեթոդիստները, բնակշահագործման գրասենյակների մանկավարժ –կազմակերպչները.

բ) մանկատների, մանկական աշխատանքային-դաստիարակչական գաղութների, մանկական ընդունարանների և մանկական ընդունման կետերի, մանկական ընդունող բաշխիչների, լոգոպետիկ կետերի և ստացիոնարների, դպրոց-կլինիկաների, երեխաների աշխատանքային դաստիարակության հատուկ դպրոցների տնօրենները, վարիչները, ուսումնադաստիարակչական աշխատանքի գծով /մասով/ տնօրենների տեղակալները, ուսուցիչները, մանկավարժ-դաստիարակները,

դաստիարակ-ղեկավարները /դաստիարակներ/, խուլ-համրերի մանկավարժները /սուրդոմանկավարժներ/.

գ) տեխնիկումների և միջնակարգ մասնագիտական ուսումնական այլ հաստատությունների /մանկավարժական, բժշկական, գյուղատնտեսական և այլն/, քոլեջների, աշխատանքային ռեզերվների համակարգի ուսումնական հաստատությունների, այլ տիպի պրոֆեսիոնալ տեխնիկական կրթության դպրոցների և ուսումնարանների /բացի բարձրագույն ուսումնական հաստատություններից/ դասատուները, մանկավարժները, տնօրենները, տնօրենների տեղակալները, գրադարանավարները, խմբագիրները, մեթոդիստները.

դ) մանկապարտեզների և միացյալ մսուր-մանկապարտեզների վարիչները, ղեկավար դաստիարակները, դաստիարակները, մեթոդիստ-դաստիարակները, մանկապարտեզների /մանկական օջախներ և մանկական հրապարակներ/ և միացյալ մաուր-մանկապարտեզների մանկավարժ դաստիարակները, մանկավարժները, մանկավարժ-ղեկավարները, ղեկավարները, երաժշտական ղեկավարները /դաստիարակներ, երաժշտական աշխատողներ/, բուժքույր-դաստիարակները.

ե) մանկական կլինիկաների, հիվանդանոցների, առողջարանների և դիսպանսերների, մսուրների, երեխայի տների, հիվանդանոցներում, առողջարաններում և գաղութներում մանկական բաժանմունքների ուսուցիչները, մանկավարժ-դաստիարակները, լոգոպեդները և խուլ-համրերի մանկավարժները /սուրդոմանկավարժներ/.

զ) գրադարանների, Մատենադարանի տնօրենները, փոխտնօրենները, գիտական քարտուղարները, բաժինների վարիչները, ենթաբաժինների վարիչները, մասնաճյուղերի վարիչները, գլխավոր գրադարանավարները, գլխավոր մասնագետները, առաջատար գրադարանավարները, առաջին և երկրորդ կարգի գրադարանավարները, առաջին և երկրորդ կարգի խմբագիրները,

է) թանգարանների, Մատենադարանի էքսկուրսավարները, կրտսեր, ավագ, առաջատար գիտաշխատողները, ֆոնդերի և ցուցանմուշների պահպանողները, վերականգնող նկարիչները, թանգարանային հիմնական գործունեության մասնագետները, ֆոնդային և գիտահետազոտական բաժինների մասնագետները, թատրոնների մանկավարժ-դաստիարակները.

ը) ֆոնդապահները՝ ֆոնդապահ, ավագ ֆոնդապահ, գլխավոր ֆոնդապահ, պահպանող, ավագ պահպանող.

արխիվագետները՝ արխիվագետ, առաջին և երկրորդ կարգի արխիվագետ, առաջատար արխիվագետ, գլխավոր արխիվագետ, մասնագետ, առաջին և երկրորդ կարգի մասնագետներ, առաջատար մասնագետ, գլխավոր մասնագետ, կրտսեր գիտաշխատող, գիտաշխատող, ավագ գիտաշխատող, առաջատար գիտաշխատող, դիվանապահ /արխիվարիուս/, մեթոդիստ, փորձագետ-մեթոդիստ, առաջին և երկրորդ կարգի մեթոդիստներ, ավագ մեթոդիստ, առաջատար մեթոդիստ, գլխավոր մեթոդիստ, առաջինից վեցերորդ կարգի արխիվ կարգավորողներ և բրիգադավարներ, տեսուչ, ավագ տեսուչ.

հնագիրները /պալեոգրաֆ/՝ հնագիր, առաջին և երկրորդ կարգի հնագիրներ, ավագ հնագիր, առաջատար հնագիր, թարգմանիչ, գրադարանավար, ավագ գրադարանավար, մասնագետ /բիբլիոգրաֆ/, ավագ մասնագետ.

հնագետները /արխեոգրաֆ/՝ հնագրագետ, առաջին և երկրորդ կարգի հնագրագետներ, ավագ հնագրագետ, առաջատար հնագրագետ, գլխավոր հնագրագետ, սրբագրիչ, առաջին և երկրորդ կարգի սրբագրիչներ, խմբագիր, առաջին և երկրորդ կարգի խմբագիրներ, ավագ խմբագիր, տեխնիկական խմբագիր.

ապարատավարները՝ ապարատավար, ավագ ապարատավար, համակարգչի ապարատավար, ինժեներ, ավագ ինժեներ, օպերատոր, հսկող, հսկող վարպետ, ավագ հսկող վարպետ ստուգող, տեխնիկ, վարպետ տեխնիկ, հերթապահ տեխնիկ, ավագ հերթապահ տեխնիկ, լաբորանտ, ավագ լաբորանտ մոնտաժող, հայտածող.

երևակողները՝ երևակող, վարպետ, ավագ վարպետ երևակող, լաբորանտ, ավագ լաբորանտ, լուսանկարիչ.

վերականգնողները՝ վերականգնող, վարպետ վերականգնող, ախտահանող, լաբորանտ.

կազմարարները՝ կազմարար, վարպետ-կազմարար, ավագ վարպետ-կազմարար, լաբորանտ.

արխիվային վարչության, պետական արխիվի, գերատեսչական արխիվի, պետական արխիվի մասնաճյուղի, բաժինների, գրադարանների, լաբորատորիաների, արխիվային ծառայությունների կենտրոնի, արխիվ կարգավորող գրասենյակի, ընթերցասրահի, արխիվադարանի պետերը և տեղակալները, տնօրենները և փոխտնօրենները, վարիչները և տեղակալները.

թ) մանկապատանեկան դպրոցների և օլիմպիական հերթափոխի ուսումնարանների մարզիչ-մանկավարժները:

Հոդված 3. Քաղաքացիական ավիացիայի առանձին կատեգորիայի աշխատողների երկարամյա ծառայության կենսաթոշակներ նշանակելու պայմանները

Քաղաքացիական ավիացիայի առանձին կատեգորիայի աշխատողների երկարամյա ծառայության կենսաթոշակներ նշանակվում են՝

1.Թռիչքային և թռիչքահրահանգչական անձնակազմի անդամներին՝ 40 տարին լրացած և առնվազն 20 տարի ծառայած այն կանանց, 45 տարին լրացած և առնվազն 25 տարի ծառայած այն տղամարդկանց, ովքեր զբաղեցրել են հետևյալ պաշտոնները կամ զբաղվել են աշխատանքային գործունեության հետևյալ տեսակներով՝

-օդային նավատորմի և թռչող այլ ապարատների անձնակազմի անդամները.

-թռիչքահրահանգչական անձնակազմի անդամները.

- թռիչքահրամանատարական անձնակազմի անդամները՝ գերատեսչությունների, վարչությունների, միավորումների, ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների և նրանց կառուցվածքային ստորաբաժանումների թռիչքային ծառայության /թռիչքային աշխատանքի/ ղեկավարները, նրանց տեղակալները, տեսուչները և այն մասնագետները, ովքեր ունեն թռիչքային գործող վկայականներ և մասնակցում են թռիչքներին՝ օդանավի կամ թռչող այլ ապարատի անձնակազմում.

-բոլոր անվանումների պարաշուտիստները, փրկարարները;

Երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք ունեն նաև վերը նշված պաշտոնները զբաղեցրած այն աշխատողները, ովքեր թռիչքային

աշխատանքներից ազատվել են առողջական վիճակի պատճառով և ծառայել են՝ կանայք՝ առնվազն 15 տարի և տղամարդիկ՝ առնվազն 20 տարի:

2. Օդային երթևեկության կառավարումն իրականացնող ծառայությունների անձնակազմի անդամներին՝ 45 տարին լրացած և առնվազն 12 տարի ծառայած այն կանանց, 50 տարին լրացած և առնվազն 15 տարի ծառայած այն տղամարդկանց, ովքեր զբաղեցրել են հետևյալ պաշտոնները կամ զբաղվել են աշխատանքային գործունեության հետևյալ տեսակներով՝

-դիսպետչերները

-ավագ դիսպետչերները

-դիսպետչեր-հրահանգիչները

-դիսպետչերական կետերի հրահանգիչները

-թռիչքների ղեկավարները

-օդային երթևեկության կառավարման ծառայության պետերը.

-օդանավակայանների պետերը.

-օդային երթևեկության կառավարման գծով տեղակալները:

Երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք ունեն նաև վերը նշված պաշտոնները զբաղեցրած այն աշխատողները, ովքեր օդային երթևեկության անմիջական կառավարման աշխատանքներից ազատվել են առողջական վիճակի պատճառով և ծառայել են՝ կանայք՝ առնվազն 7 տարի և տղամարդիկ՝ առնվազն 10 տարի:

Թռիչքային և թռիչքահրահանգչային անձնակազմում ծառայության ժամանակաշրջանի մեջ հաշվառվում է նաև օդային երթևեկության կառավարման աշխատանքը:

3. Ինժեներատեխնիկական անձնակազմի անդամներին՝ 50 տարին լրացած և առնվազն 15 տարի ծառայած այն կանանց, 55 տարին լրացած և առնվազն 20 տարի ծառայած այն տղամարդկանց, ովքեր զբաղվել են աշխատանքային գործունեության հետևյալ տեսակներով՝

-բոլոր անվանումների ավիացիոն տեխնիկները /մեխանիկներ, մոտորիստներ և այլն/.

-բոլոր անվանումների ինժեներները.

-օդային նավատորմի և թռչող այլ ապարատների տեխնիկական սպասարկման արտադրամասերի, հերթափոխերի, տեղամասերի, ծառայությունների, խմբերի պետերը.

-բորտ-օպերատորները և բորտ-ուղեկցորդները:

Ինժեներատեխնիկական անձնակազմի ծառայության ժամանակաշրջանի մեջ հաշվառվում է նաև թռիչքային, թռիչքահրահանգչական և օդային երթևեկությասն կառավարման աշխատանքների ժամանակաշրջանը:

4. Ավիացիայի թռիչքային, ինժեներատեխնիկական անձնակազմի, ինչպես նաև օդային երթևեկության կառավարման ծառայության աշխատողների երկարամյա ծառայության ժամկետները հաշվարկվում են՝

ա/ մխոցային օդանավերի վրա /բացի սույն կետի «բ» և «դ» ենթակետերով նախատեսված թռիչքներից և աշխատանքներից/ յուրաքանչյուր 20 ժամ թռիչքը՝ որպես մեկ ամսվա ծառայություն.

բ/ ռեակտիվ օդանավերի, ուղղաթիռների վրա, հատուկ կիրառման ավիացիայում /սանիտարական թռիչքները, ավիաքիմիական աշխատանքներ, ավիալուսանկարահանում, պարեկություն, մթնոլորտի զոնդում և այլ տեսակի աշխատանքներ/, այլ պետությունների

օդանավերին ուղեկցող խմբերի թռիչքային անձնակազմի պաշտոններում, թռիչքահրամանատարական, թռիչքահրահանգչական անձնակազմի, այդ թվում՝ ավիացիայի թռիչքային անձնակազմի կադրերի պատրաստման և որակավորման բարձրացման բարձրագույն և միջնակարգ ուսումնական հաստատություններում յուրաքանչյուր 12 ժամ թռիչքը՝ որպես մեկ ամսվա ծառայություն.

գ/ վթարային-փրկարար /որոնող-փրկարար/ ստորաբաժանումներում օդանավերի թռչող անձնակազմի մեկ տարվա աշխատանքը՝ որպես մեկ և կես տարվա ծառայություն.

դ/ նախկին ԴՕՍԱԱՖ-ի ուսումնական և սպորտային ավիացիայի կազմակերպությունների թռչող անձնակազմի պաշտոններում մեկ տարվա աշխատանքը հաշվարկվում է որպես՝

-մեկ և կես տարվա ծառայություն, եթե կատարվել է ուսումնաթռիչքային պատրաստման պլանը.

-երկու տարվա ծառայություն, եթե կատարվել են թռիչքային բարդ կամ բարձրակարգ հնարքներ.

ե/ պարաշուտիստների և փրկարարների մեկ տարվա աշխատանքը հաշվարկվում է որպես՝

- մեկ և կես տարվա ծառայություն, եթե կատարվել է մխոցային օդանավերից, ուղղաթիռներից, դիրիժաբլներից և աէրոստատներից թռչելու, 10 մետրից ոչ պակաս բարձրության վրա կախման ռեժիմում գտնվող ուղղաթիռներից հատուկ իջեցնող /բարձրացնող/ հարմարանքներից վայրէջքի /վերելքի/ տարեկան նորման.
- երկու տարվա ծառայություն, եթե կատարվել է ռեակտիվ ինքնաթիռներից և ուղղաթիռներից թռիչքի տարեկան նորման:
- Սույն կետի «ա» և «բ» ենթակետերին համապատասխան ծառայության ժամկետները հաշվարկվում են թռիչքային անձնակազմի պաշտոններում աշխատանքի ամբողջ ժամանակամիջոցի փաստացի թռիչքային ժամերը համապատասխանաբար 20-ի և 12-ի վրա բաժանելու միջոցով: Ծառայության տարեկան հաշվարկը կատարվում է ծառայության լրիվ ամիսների թիվը 12-ի վրա բաժանելու միջոցով:
- Տարվա ընթացքում սույն կետում նշված տարբեր աշխատանքների կատարման դեպքում երկարամյա ծառայության ժամկետը հաշվարկվում է յուրաքանչյուր աշխատանքում ժամերի /զբաղվածության/ համամասնական չափերով:
- Թռիչքային անձնակազմի երկարամյա ծառայության ժամկետների մեջ հաշվի են առնվում՝
- -զինված ուժերի թռիչքային անձնակազմի պաշտոններում ծառայելու և թռիչքափորձարկման անձնակազմի պաշտոններում աշխատելու ժամանակը.
- - այլ պետությունների քաղաքացիական ավիացիայի թռիչքային անձնակազմի պաշտոններում աշխատած ժամանակը՝ համապատասխան տեսակի թռիչքային աշխատանքների համար սույն կետով սահմանված կարգով, պայմանով, որ կատարվել են ապահովագրական վճարումները Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային և զբաղվածության հիմնադրամ.
- երեխաների խնամքի համար կանանց տրվող վճարովի արձակուրդը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված տևողությամբ:

Ինժեներատեխնիկական անձնակազմի և օդային երթևեկության

կառավարման ծառայության աշխատողների երկարամյա ծառայության ստաժի մեջ հաշվարկվում է ավիացիայի թռիչքային անձնակազմում կատարած աշխատանքը՝ սույն կետով նախատեսված կարգով, ըստ համապատասխան աշխատանքի տեսակի:

Հոդված 4. Թատերական և թատերահանդիսային կազմակերպությունների / ձեռնարկությունների/ առանձին կատեգորիայի դերասաններին /արտիստներին/ երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակներ նշանակելու պայմանները

Թատերական և թատերահանդիսային կազմակերպությունների /ձեռնարկությունների/ առանձին կատեգորիայի դերասաններին /արտիստներին/ երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակներ նշանակվում են՝

ա/ 45 տարին լրացած և 20 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունեցող այն անձանց, ովքեր զբաղվել են աշխատանքային գործունեության հետևյալ տեսակներով՝

բալետի պարողները, պրոֆեսիոնալ-գեղարվեստական կոլեկտիվների պարային համարներ կատարող դերասանները, կրկեսի և համերգային կազմակերպությունների օդային մարմնամարզիկները, սարքերի վրա աշխատող մարմնամարզիկները, մոտոհեծանվաֆիգուրիստները, ակրոբատները, լարախաղացները, վայրի գազաններ վարժեցնողները, կրկեսային բոլոր ժանրերի թզուկ-դերասանները, կրկեսային համարներ կատարող ծաղրածուները, կասկադյորները.

բ/ 50 տարին լրացած և 25 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունեցող այն անձանց, ովքեր զբաղվել են աշխատանքային գործունեության հետևյալ տեսակներով՝

օպերայի և բալետի, երաժշտական կոմեդիայի, երաժշտական-դրամատիկական, պատանի հանդիսատեսի թատրոնների դերասանները, համերգային կազմակերպությունների, հեռուստատեսության և ռադիոհաղորդումների մենակատար վոկալիստ արտիստները, ինչպես նաև երաժշտական թատրոնների նվագախմբերում, սիմֆոնիկ նվագախմբերում փողային գործիքներ նվագողները, տիկնիկային թատրոնների տիկնիկներ խաղացնող դերասանները:

գ/ 55 տարին լրացած և 25 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունեցող այն անձանց, ովքեր զբաղվել են աշխատանքային գործունեության հետևյալ տեսակներով՝

համերգային կազմակերպությունների, երաժշտական էստրադային նվագախմբերի փողային գործիքներ նվագող դերասանները, երգչախմբային կոլեկտիվների բարձր կատեգորիա ունեցող մենակատար դերասանները, ծաղրածուները:

Հոդված 5. Առանձին կատեգորիայի մարզիկներին երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակներ նշանակելու պայմանները

Երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակներ նշանակվում են 45 տարին լրացած այն մարզիկներին, ովքեր 5 տարի եղել են օլիմպիական մարզաձևերի Հայաստանի Հանրապետության մեծահասակների հավաքական թիմերի անդամներ և ունեն սպորտի

վարպետի կոչում կամ եղել են օլիմպիական խաղերի, շախմատի աշխարհի օլիմպիադայի մասնակիցներ կամ աշխարհի, Եվրոպայի, նախկին ԽՍՀՄ-ի, ԽՍՀՄ ժողովուրդների սպարտակիադաների մեծահասակների մրցանակակիրներ, գավաթակիրներ:

Կենտրոն և Նոր-Նորք համայնքների
առաջին ատյանի դատարանին
Հայցվոր՝ Անահիտ Գասպարյան,
Հասցեն՝ ք. Երևան, Երվ. Քոչարի 15,
Պատասխանող՝ Գրիգոր Թադևոսյան
Հասցեն՝ ք. Երևան, Ամիրյան փող., տուն 5

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄ
հայրությունը ճանաչելու վերաբերյալ

Ես՝ Անահիտ Գասպարյանս, Գրիգոր Թադևոսյանի հետ համատեղ բնակվել եմ 1997թ. հունվարից մինչև 1999թ. փետրվարը: 1997թ. հոկտեմբերին ծնվել է մեր դուստրը՝ Արմինե Գասպարյանը:

Պատասխանող Գրիգոր Թադևոսյանը հրաժարվում է դիմում ներկայացնել քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմին՝ հայրության գրանցման խնդրանքով:

Իմ դստեր նկատմամբ Գրիգոր Թադևոսյանի հայրության փաստը հաստատվում է նշված ժամանակահատվածում մեր համատեղ բնակությամբ և ընդհանուր տնտեսություն վարելով, ինչը կարող է հաստատվել վկաների ցուցմունքներով, Գրիգոր Թադևոսյանի՝ գործուղման ընթացքում ինձ ուղղված նամակներով:

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ
Հաստատել, որ Գրիգոր Թադևոսյանը՝ ծնված 1965թ., բնակվող՝ ք Երևան, Ամիրյան փող., տուն 5 հասցեում, հանդիսանում է Արմինե Գասպարյանի հայրը: